

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«05» նոյեմբեր 2020թ.

No 3897 - Լ

«ՅԱՆԻԼԻՍ (ՋՐԱԾՆԻ ՊԵՐՕՔՍԻԴ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Յանիլիս (ջրածնի պերօքսիդ)» ավտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

«ՅԱՆԻԼԻՍ (ՋՐԱԾՆԻ ՊԵՐՕՔՍԻԴ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Յանիլիս (ջրածնի պերօքսիդ)» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց)՝ իրենից ներկայացնում է թափանցիկ, անգույնից մինչև դեղին գույնի հեղուկ: Որպես ազդող նյութ պարունակում է ջրածնի պերօքսիդ-18.0% պոլիհեքսամեթիլենգլուանիդին հիդրոքլորիդ (ՊՀՄԳ)- 2.0%, ՉԱՄ խառնուրդ (N,N-դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, N,N-դիօկտիլդիմեթիլամոնիումի քլորիդ, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ) գումարային 21%: Բացի դրանից միջոցի բաղադրության մեջ մտնում են կոմպլեքս առաջացնող և կայունացնող հավելումներ, ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութերի համալիր և ջուր: Միջոցի PH-4.0±0.5:

2. Միջոցը թողարկվում է ամուր փակվող գլխիկով կամ կափարիչով 100, 200, 500, 1000 սմ³ տարողությամբ պոլիմերային սրվակներով: Ամուր փակվող կափարիչով պոլիմերային տարրաներով 5, 10, 20, 40 դմ³ տարողությամբ և պոլիմերային տակառներով 50, 100, 200 դմ³ տարողությամբ:

1) Միջոցի պիտանելիության ժամկետը 2 տարի է արտադրողի փակ փաթեթավորմամբ (այդ թվում՝ բացելուց հետո): Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը սենյակային ջերմաստիճանում, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, էմալապատ (առանց էմալի վնասման), պլաստիկից կամ ապակուց փակ տարրայի մեջ, պահպանման պայմաններում 15 օր է: Աշխատանքային լուծույթները կարող են օգտագործվել բազմակի, սույն հրահանգի ռեժիմներին համապատասխան: Միջոցը պահպանում է իր հատկությունները սառչելուց և հալվելուց հետո, լավ լուծվում է ջրում:

2) Միջոցի աշխատանքային լուծույթները չեն վնասում ապակյա, պլաստմասե և այլ պոլիմերային նյութերից, կոռոզիակայուն մետաղներից, տիտանից, ածխածնային

պողպատեից պաշտպանիչ ծածկույթով, ռետինե (բացառությամբ սիլիկոնի) մշակվող մակերեսները:

3) Միջոցը չի օգտագործվում ածխածնային պողպատից, պղնձից և պղնձի համաձուլվածքից, ալյումինից և դրա համաձուլվածքներից, թույլ լեգիրված պողպատից առանց պաշտպանիչ շերտի, այդ թվում պաշտպանիչ շերտը վնասված արտադրատեսակների մշակման համար: Միջոցը չի կարելի օգտագործել օճառների, լվացքի փոշիների և անիոնային մակերեսային ակտիվ նյութերի հետ:

4) Կենսաբանական ակտիվությունը՝ միջոցի աշխատանքային լուծույթներն օժտված են մանրէասպան (ազդում են գրամբացասական և գրամդրական մանրէների, այդ թվում՝ ներհիվանդանոցային վարակների հարուցիչների վրա), տուբերկուլոցիդ ազդեցությամբ (թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա) վիրուսասպան (մարդու բոլոր հայտնի ախտածին վիրուսների, այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտների (ներառյալ հեպատիտներ Ա-ն, Բ-ն և Ց-ն), ՄԻԱՎ-ի, պոլիոմիելիտի նկատմամբ), սնկասպան, սպորասպան հատկություններով: Բացի այդ, միջոցն օժտված է հակաբորբոսային ակտիվությամբ, ազդում է հատուկ վտանգավոր վարակների (խոլերա, տուլարեմիա, բրուցելոզ, սիբիրյան խոց), ինչպես նաև անաէրոբ վարակների հարուցիչների վրա: Աշխատանքային լուծույթները օժտված են երկարատև ազդեցությամբ:

5) Թունաբանական ցուցանիշները՝ միջոցն (աշխատանքային լուծույթում խտությունը 10% և 34%) ըստ սուր թունավորության չափանիշների, ԳՈՍՏ 12.1.007-76-ին համապատասխան, ստամոքսի մեջ ներմուծելիս պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 3-րդ դասին, մաշկի վրա լցվելիս՝ քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին, քիչ թունավոր է արտաընդերային ներմուծման ժամանակ՝ ըստ Կ. Կ. Սիդորովի դասակարգման, անմիջական շփման ժամանակ առաջացնում է մաշկի և աչքերի լորձաթաղանթի գրգռում, օժտված չէ գերզգայունացնող հատկություններով, ներշնչական (ինհալացիոն) ազդեցության ժամանակ հագեցած գոլորշիները քիչ վտանգավոր են (ըստ անկայունության աստիճանի վտանգավորության 4-րդ դաս), անմիջական շփման ժամանակ առաջացնում է մաշկի և աչքերի լորձաթաղանթի գրգռում, օժտված չէ գերզգայունացնող հատկություններով:

6) Միջոցի աշխատանքային լուծույթները (խտությունը 0,1-5,0%) մաշկի վրա մեկ անգամ լցվելիս տեղային գրգռող ազդեցություն չեն թողնում, իսկ մի քանի անգամ

ազդեցությունից հետո առաջացնում է մաշկի չորություն, ոռոգման եղանակով օգտագործման ժամանակ կարող է առաջացնել շնչառական օրգանների և աչքերի լորձաթաղանթի գրգռվածություն:

7) Սենքում ցանկացած առարկայի, միջոցի լուծույթով մշակումը, ընկղման և թրջման եղանակով կարելի է անցկացնել հիվանդի ներկայությամբ:

8) Սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) աշխատանքային գոտու օդում ՉԱՄ համար 1 մգ/մ³ է (աէրոզոլ, վտանգավորության 2-րդ դաս, պահանջվում է մաշկի և աչքերի հատուկ պաշտպանություն), ՊԼՄԳ-ի համար՝ 2 մգ/մ³ է, (աէրոզոլ, վտանգավորության 2-րդ դաս, պահանջվում է մաշկի և աչքերի հատուկ պաշտպանություն):

3. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) (հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, առողջարաններ, վերականգնողական կենտրոններ, ցերեկային ստացիոնարներ, բուժսանձամասեր և բուժկետեր, բուժակային և բուժակ-մանկաբարձական կետեր, հեմոդիալիզի բաժանմունքներ, դիսպանսերներ, հոսպիտալներ, ատամնաբուժական կաբինետներ, ծննդաբերական ստացիոնարներ, օրգանների փոխպատվաստման կենտրոններ, արյան փոխներարկման և շտապօգնության կայաններ և այլն), կլինիկական, մանրէաբանական, ախտաբանանատոմիական, իմունաբանական, ՊՇՌ ախտորոշիչ և ախտաճնության 3-4 խմբերի մանրէների հետ աշխատող այլ լաբորատորիաներում, վարակիչ հիվանդությունների օջախներում, սպասարկման ոլորտի օբյեկտներում (հյուրանոց, հանրակացարան, բաղնիք, շոգեբաղնիք (սաունա), լվացքատուն, գեղեցկության սրահ, սոլյարի, պիրսինգի և դաջվածքի սրահներ, ոտնա- և մատնահարդարման սրահներ, կոսմետոլոգիական կաբինետներ, ՍՊԱ սրահներ և այլն), առողջարաններում, հանգստյան տներում, միջամտությունների կաբինետներում, ֆիզիոթերապևտիկ կաբինետներում, ջրաբուժարաններում, բժշկական կոսմետոլոգիայի կաբինետներում, հանգստյան և սպորտի կազմակերպություններում (մարզադաշտեր, լողավազաններ, ակվապարկեր, սպորտային դահլիճներ, ֆիթնես կենտրոններ, խաղային և զվարճանքի կենտրոններ և այլն), հասարակական շենքերում և վարչական կազմակերպություններում (ցուցահանդեսներ, կինոթատրոններ, թատրոններ, թանգարաններ, գրադարաններ, առևտրի կենտրոններ և այլն), հասարակական

զուգարաններում, այդ թվում բիոզուգարաններում, սանթոդարաններում, հանրային սննդի կազմակերպություններում (ռեստորան, սրճարան, ճաշարան, բար, բուֆետ, սննդի բլոկ, սննդի նախապատրաստման մաս և այլն), սննդարդյունաբերության և սննդի առևտրի կազմակերպություններում, դեղատներում (ներառյալ դեղատնային կրպակների և դեղերի պատրաստման բաժինների, դեղերի պահեստների), քիմիկա-դեղագործական և օժանելիքակոսմետիկական արտադրության կազմակերպություններում, այլ արտադրական կազմակերպություններում և պահեստներում, այդ թվում ցորենի, սննդամթերքի, հիգիենայի պարագաների պահեստներում, թղթային պահոցներում, սպառողական և արդյունաբերական շուկաներում, մանկական և հանրակրթական կազմակերպություններում (մանկապարտեզներ, դպրոցներ, միջին մասնագիտացված ուսումնական հաստատություններ, ԲՈՒՀ-եր, հատուկ մասնագիտացված ուսումնական հաստատություններ, երեխաների հատուկ հաստատություններ (մանկատներ, տուն-ինտերնատներ, մանկական առողջարաններ և այլն)), սոցիալական ապահովման հաստատություններում (հոսպիսներ, պալիատիվ խնամքի կենտրոններ, տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատներ և այլն), քրեակատարողական հիմնարկներում, դատա-բժշկական փորձաքննության կազմակերպություններում և օբյեկտներում, դիահերձարաններում, հուղարկավորության արարադրությունների կազմակերպման հաստատություններում (դիակիզարաններ, կոլումբարիումներ), ջրամատակարարման օբյեկտներում և էներգացանցներում, ՊՆ, ԱԻՆ, ներքին գործերի նախարարության և այլ գերատեսչություններին պատկանող օբյեկտներում, սանիտարական տրանսպորտի, սննդամթերքի տեղափոխման տրանսպորտի, քաղաքային վերգետնյա և էլեկտրա-ուղևորատրանսպորտի, բեռնափոխադրող տրանսպորտի, ավտոտրանսպորտային արտադրություններում, մաքրող կազմակերպությունների կողմից մաքրման վայրերում, մարդկանց զանգվածային կուտակումների վայրերում, ինչպես նաև այլ համաճարակային նշանակություն ունեցող օբյեկտներում, որտեղ պահանջվում է ախտահանման աշխատանքների իրականացում՝ գործող նորմատիվների համապատասխան, ինչպես նաև ազգաբնակչության կողմից՝ կենցաղում օգտագործելու համար:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

4. Միջոցի աշխատանքային լուծույթը պատրաստում են էմալապատ (առանց էմալի վնասման), ապակյա կամ պլաստմասայից տարաների մեջ խմելու ջրի հետ խառնելու միջոցով, սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված սխեմային համապատասխան :

Աղյուսակ 1

Միջոցի աշխատանքային լուծույթի պատրաստման սխեմա

Աշխատանքային լուծույթի խտություն, %				Միջոցի և ջրի քանակը, որը պահանջվում է աշխատանքային լուծույթի պատրաստման համար					
				1 լիտր		5 լիտր		10 լիտր	
ըստ պատրաստուկի	ըստ ախտահանիչ նյութի			միջոց	ջուր	միջոց	ջուր	միջոց	ջուր
	H ₂ O ₂	ՊՀՄԳ	ՉԱՄ						
0.1	0.018	0.002	0.021	1	999	5	4995	10	9990
0.25	0.045	0.005	0.053	2.5	997.5	12.5	4987.5	25	9975
0.5	0.09	0.01	0.105	5	995	25	4975	50	9950
0.75	0.135	0.015	0.158	7.5	992.5	37.5	4962.5	75	9925
1.0	0.18	0.02	0.21	10	990	50	4950	100	9900
2.0	0.36	0.04	0.42	20	980	100	4900	200	9800
3.0	0.54	0.06	0.63	30	970	150	4850	300	9700
5.0	0.9	0.1	1.05	50	950	250	4750	500	9500
10.0	1.8	0.2	2.1	100	900	500	4500	1000	9000
34.0	6.12	0.68	7.14	340	660	1700	3300	3400	6600

5. Աշխատանքային լուծույթով տարաները պետք է ունենան կափարիչ, հստակ գրառում միջոցի անվան, խտության, նշանակության, պատրաստման ամսաթվի, պիտանելիության սահմանային ժամկետի նշումով:

3. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ

6. Միջոցի աշխատանքային լուծույթը նախատեսված է՝

1) Ախտահանման և լվացման (այդ թվում՝ դեզոդորացման) համար

ա. Սենքերի արտաքին մակերեսների (հատակ, պատեր, առաստաղ) և կահավորանքի (այդ թվում՝ փափուկ և չոր կահույք), կանխարգելիչ, ընթացիկ և եզրափակիչ

ախտահանման ժամանակ, ինչպես նաև բուժշկական և այլ կազմակերպությունների հիմնական մաքրման համար,

բ. բժշկական և այլ սարքավորումների (այդ թվում կուվեզների և դրանց հարմարեցված, անզգայացման-շնչառական և ինհալացիոն սարքավորումների բաղկացուցիչ մասեր, անզգայացման սարքավորումներ):

գ. հիվանդի խնամքի պարագաների, ինչպես նաև բժշկական կազմակերպություններում օգտագործվող այլ պարագաների (անհատական պաշտպանության միջոցներ, ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր, մոմլաթե տակդիրներ),

դ. օդափոխման և օդորակման համակարգերի,

ե. սանիտարա-տեխնիկական սարքավորումների (այդ թվում զուգարանակոնքերի, հաղճապակյա, չուգունե և ակրիլից պատրաստված վաննաների, այդ թվում ջրաբուժարանային, բուժիչ, ցեխային, հանքային, ջրամերսման և այլ ցնցուղախցիկներ),

զ. մաքրման պարագաների,

ե. սպիտակեղենի, նարառյալ անկողնային և անհատական, աշխատանքային արտահագուստի այդ թվում բժշկական, գործվածքից պատրաստված մաքրման պարագաների և այլ ապրանքների, պատրաստված տարբեր գործվածքներից,

զ. խաղալիքների, կոշիկների, ռետինե, պլաստիկի և այլ պոլիմերային նյութերից սպորտային գույքի,

է. ճաշարանային, լաբորատոր, դեղատնային սպասքի, այդ թվում՝ միանվագ օգտագործման,

ը. ալգինատային, սիլիկոնային նյութերից, պոլիէթերային խեժից ատամնաբուժական արտատպվածքների, մետաղյա, կերամիկայի, պլաստմասե ատամնապրոթեզային կիսահումքերի, թքարտածծիչների ծայրադիրների և թքամանների ախտահանման համար,

թ. բժշկական թափոնների, այդ թվում միանվագ օգտագործման, փափուկ վիրակապական նյութի, միանվագ օգտագործման անկողնային և անհատական սպիտակեղենի (Ե, Ե դասերի)՝ նախքան դրանց հեռացնելը, սննդի մնացորդների, ինչպես նաև A, Ե, Ե դասերի թափոնների հավաքման (բազմակի օգտագործման) տարաների,

ժ. կենսաբանական նյութի, այդ թվում առանձին հավաքագրված (ներառյալ արյան և դրա շիճուկի և պլազմայի, մեզի, կղանքի, փսխման զանգվածների, ողնուղեղային հեղուկի, վիրահատական նյութի, դրենաժային արտադրության, ախտաբանաանատոմիական թափոնների (հյուսվածքներ, օրգաններ, էրիթրոցիտար զանգված, հարպտղային հեղուկ, էնդոսկոպների լվացման ջուր և այլն) և դրանց հավաքման տարողությունները),

ի. տրանսպորտի և սարքավորումների մակերեսների (սանիտարական, սննդամթերքի տեղափոխման, հասարակական), երկաթուղային և ջրային տրանսպորտի, օդային տրանսպորտի ցամաքային օբյեկտների վրա, մետրոյի,

լ. բնակելի, վարչական և հասարակական շենքերի աղբահանության համակարգեր, ներառյալ թափոնների հավաքման սարքավորումները, աղբատար մեքենաները, աղբամանները, աղբատարերը և այլն,

խ. գործիքներ, օժանդակ իրեր, կահավորանք և սարքավորումներ, որոնք օգտագործվում են հանրային ծառայության ոլորտի տարբեր օբյեկտներում (գեղեցկության սրահներ, վարսավիրանոցներ և այլն):

2) Նախնական և եզրափակիչ նախամանրէազերծման մշակման նախքան բարձր մակարդակի ախտահանման համար, ներառյալ վիրաբուժական, ստոմատոլոգիական, այդ թվում պտտվող, ջերմազգայուն նյութերից պատրաստված իրերի (էնդոսկոպներ և դրանց կից գործիքներ) ձեռքային և մեքենայացված եղանակով (ուլտրաձայնային կամ ցանկացած տեսակի հատուկ սարքավորումներում),

3) Ախտահանման, նախամանրէազերծման մաքրման (ախտահանման հետ համակցված) համար, տարբեր նյութերից պատրաստված բժշական նշանակության իրերի (ներառյալ վիրաբուժական և ստոմատոլոգիական գործիքների, այդ թվում՝ պտտվող իրերի) ձեռքային և մեքենայացված (ցանկացած տեսակի ուլտրաձայնային սարքավորումների) եղանակներով,

4) Էնդոսկոպների ԲՄԱ համար, եթե էնդոսկոպիկ սարքավորումների արտադրողի կողմից թույլատրվում է ջրածնի պերօքսիդ պարունակող միջոցների կիրառումը:

5) Բժշկական նշանակության իրերի մանրէազերծումը, ներառյալ վիրաբուժական և ստոմատոլոգիական գործիքների, ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների, իրականացվում է արտադրողի կողմից թույլտարված մշակում ջրածնի պերօքսիդ պարունակող միջոցներով:

ա. Բացի այդ, միջոցի աշխատանքային լուծույթները նախատեսված են օգտագործել ախտահանիչ գորգերի, մատերի և պատնեշների հետ համատեղ:

բ. Նախատեսված են օգտագործել ազգաբնակչության կողմից կենցաղում, համապատասխանաբար կենցաղում օգտագործման համար պիտակի առկայության դեպքում:

6) Միջոցի կոնցենտրիկ լուծույթը (առանց նոսրացման) կիրառվում է միայն հեղուկ թափոնների ախտահանման համար (կենսաբանական հեղուկների, մաքրման համար օգտագործված ախտահանիչների լուծույթներ, որոնք չեն զուգորդվում ախտահանման հետ):

Աղյուսակ 2

Միջոցի աշխատանքային լուծույթի, կիրառման եղանակները, կիրառման քանակը և պիտանելիության ժամկետը

Պահպանման պայմանները, կիրառման եղանակները	Պահպանման ժամկետը, կիրառման հաճախականությունը
Միջոցն արտադրողի փաթեթավորմամբ (այդ թվում՝ բացելուց հետո)	2 տարի
Աշխատանքային լուծույթներ՝ պահպանված փակ ապակյա, պլաստմասե կամ արծնապատ (առանց վնասման) տարայում, սենյակային ջերմաստիճանում, արևի ճառագայթներից հեռու տեղում:	15 օր
Լուծույթներ՝ ախտահանման նպատակով, շփման կամ ոռոգման եղանակներով կիրառելու համար:	Մեկ անգամ
Լուծույթներ՝ վարակված արտադրատեսակների ախտահանման հետ չհամակցված նախնական մաքրման համար:	1 օրվա ընթացքում՝ բազմակի կիրառում
Լուծույթներ՝ մանրէազերծ օբյեկտների նախամանրէազերծման մաքրման նպատակով կիրառելու համար:	15 օրվա ընթացքում՝ բազմակի կիրառում
Լուծույթներ՝ նախամանրէազերծումն ախտահանման հետ մեկ փուլում համակցված կիրառելու համար:	15 օրվա ընթացքում՝ բազմակի կիրառում
Լուծույթներ՝ նախնական մաքրման փուլ անցած, ինչպես նաև «էսթետիկ» մաքուր առարկաների նախնական ախտահանման համար:	15 օրվա ընթացքում՝ բազմակի կիրառում
Լուծույթներ՝ նախնական ախտահանումը նախամանրէազերծումն հետ չհամակցված մեկ փուլում կիրառելու համար:	15 օրվա ընթացքում՝ բազմակի կիրառում
Լուծույթներ՝ բարձր մակարդակի ախտահանման կամ մանրէազերծման չենթարկվող օբյեկտների եզրափակիչ ախտահանման միջանկյալ մակարդակի կիրառման համար:	Մեկ անգամ

Լուծույթներ՝ բարձր մակարդակի ախտահանման կամ մանրէազերծման չենթարկվող օբյեկտների եզրափակիչ ախտահանման միջանկյալ մակարդակի կիրառման համար:	15 օրվա ընթացքում 5-ից ոչ ավելի անգամ կիրառում
Լուծույթներ՝ ռետինե բնական կաուչուկի հիմքով բժշկական արտադրատեսակների մանրէազերծման համար	Մեկ անգամ

7. Արտաքին տեսքի փոփոխության առաջին իսկ նշանների (գույնի փոփոխություն, լուծույթի պղտորություն և այլն) դեպքում լուծույթը փոխարինվում է:

8. Միջոցի աշխատանքային լուծույթները՝ 34%-ից ցածր խտությամբ պատրաստուկները չունեն սպորասպան հատկություն, հետևաբար, խաչաձև աղտոտումը կանխելու համար, միջոցի լուծույթները, որոնք օգտագործվում են կիսակրիտիկական առարկաների վերջնական ախտահանման համար օգտագործում են միանվազ:

9. Տարբեր օբյեկտների մշակման առանձնահատկությունները սենքերի արտաքին մակերեսները: Ընդհանուր դրույթներ՝ սենքերի արտաքին մակերեսներն են՝ հատակը, պատերը, դռները, լուսամուտները, կահույքը, սարքավորումները (ներառյալ ապարատներն ու սարքերը (այդ թվում՝ շնչառական ուրվագծեր, պարկեր):

1) Ցանկացած մակերեսների ախտահանումը իրականացվում է շփման և ոռոգման եղանակով:

2) Մակերեսների մշակման դեպքում միջոցի լուծույթի ծախսը նորմայում կազմում է՝ շփման եղանակով - 100 մլ/մ² մակերևույթի մակերես, ոռոգման եղանակով - 300 մլ/մ² մակերևույթի մակերես (հիդրոպոլտ, ավտոմաքս), ոռոգման եղանակով - 150 մլ/մ² մակերևույթի մակերես (ցողացրիչ «Կավազար» տեսակի):

3) Տարբեր վարակների ժամանակ սենքերի մակերևույթների մակերեսների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 3-ում: Հիմնական մաքրման ժամանակ կիրառվող ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 4-ում: Ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակի (ՆՀՎ) հարուցչի հայտնաբերման ժամանակ, ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 12-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Հատուկ վտանգավոր վարակների հայտնաբերման ժամանակ օբյեկտների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 13-ում:

4) Յանկացած ծակող կտրող գործիքների մաքրման դեպքում (կտրած ապակի, ասեղներ և այլն), որոնք կտրող են գտնվել աղտոտված մակերևույթների մակերեսներին, անհրաժեշտ է օգտագործել օժանդակ հարմարանքներ (գոգաթիակներ, ավելներ, աքցաններ և ունելիներ), մաշկային ծածկույթները վնասվելուց խուսափելու համար: Ախտոտվածությունը արդյունավետ մաքրելու համար առանձին դեպքերում կտրող են օգտագործել խոզանակ (օրինակ՝ ծակոտկեն, անհարթություններով և խորդուբորդություններով (բետոն) մակերեսներին կենսաբանական հեղուկների թափվելու դեպքում) կամ լրացուցիչ լվացող միջոցներ (գորգերի մաքրում, փափուկ կահույքի ծածկոց և այլն): Եթե կենսաբանական արտազատուկները և արյունը հայտնվում են գորգերի կամ փափուկ կահույքի վրա, ձեռքով մաքրումը ուղեկցվում է գոլորշային կամ չոր մաքրմամբ:

10. Մակերեսներ առանց տեսանելի կենսաբանական աղտոտվածության: Մշակման մեթոդաբանություն՝ կոշտ մակերեսները շփում են միջոցի լուծույթի մեջ թրջած լաթով կամ հատուկ սարքավորումների օգնությամբ նախատեսված ախտահանիչ միջոցներ ցողելու համար: Փափուկ մակերեսները մշակում են խոզանակի օգնությամբ: Ախտահանման ազդեցության ավարտից հետո տարածքը օդափոխվում է: Յանկացած քանակությամբ (նույնիսկ փոքր) կենսաբանական հեղուկներով աղտոտված մակերեսները համաճարակաբանական նշանակություն ունեն: Դրանց մշակումը կատարվում է հետևյալ մեթոդաբանությամբ:

11. Փոքր քանակի կենսաբանական հեղուկներով աղտոտված մակերեսները: Սենքերի մակերեսներից փոքր քանակությամբ օրգանական ախտոտիչների (այդ թվում՝ չորացրած) հեռացումը կատարվում է կրկնակի ախտահանման մեթոդով համաձայն հետևյալ սխեմայի:

1) Մշակման մեթոդաբանություն՝ մակերեսը պատում են ախտահանիչ միջոցով, կանխելով ցայտերի և ճողփյունների առաջացումը: Ուղղահայաց մակերեսներին (առաստաղներ, պատեր, սանդուղքներ) միջոցի աշխատանքային լուծույթը քսելու համար օգտագործում են ցողացրիչ կամ հատակը սրբելու հարմարանք (շվաբրա):

ա. Ցողացրիչի օգտագործման դեպքում աէրոզոլների և հեղուկի ճողփյունների առաջացումը կանխելու համար, լուծույթը ցողել մշակվող մակերեսին հնարավորինս մոտ:

բ. Քսում են ախտահանիչը արտաքին եզրերից դեպի աղտոտվածության կենտրոնը:

2) Թողնում են ախտահանիչը ներծծվի ախտոտվածության մեջ ժամանակի ընթացքում, որը նշված է սույն հրահանգի աղյուսակ 3-ում:

3) Ազդեցության պահաժամից (ներկայացված է սույն հրահանգի աղյուսակ 3-ում) հետո ախտահանված կենսաբանական հեղուկը հեռացնում են միջոցի լուծույթով ներծծված գործվածքով (անձեռոցիկով) կամ մեկանգամյա թղթե (գործվածքե) սրբիչներով՝ դրանց հետագա օգտահանմամբ: Մակերեսը կրկնակի մշակում են միջոցի լուծույթով, ազդեցության պահաժամից հետո ախտահանիչի մնացորդները հեռացնելու համար իրականացնում են խոնավ մաքրում:

12. Մեծ քանակությամբ օրգանական աղտոտվածություն՝ արյան, մեզի թափվածք (առանձին տարողության մեջ հավաքելուց հետո), փսխման զանգված և այլ օրգանական նյութեր:

13. Մեծ քանակությամբ կենսաբանական նյութերն չեզոքացնում են ախտահանիչ լուծույթները՝ դարձնելով ախտահանման գործընթացն անարդյունավետ: Հետեւաբար, հեղուկի թափվելու դեպքում, նախ այն հավաքում են սորբենտների միջոցով, որոնք անմիջապես ներմուծվում են աղտոտվածության մեջ:

14. Կենսաբանական հեղուկների արտահոսքով մակերեսները ախտահանելու ամենաառաջինը միջոցը երկաստիճան մշակումն է:

15. Փուլ 1. Լոկալ մաքրման և թափվածքի տեղի ախտահանման համար կիրառում են չեզոք սորբենտ և միջոցի լուծույթ:

16. Փուլ 2. Մակերևույթի ախտահանումը ամենաբարձր խտությամբ աշխատանքային լուծույթներով: Մշակման մեթոդաբանությունը՝

1) Առաջին հերթին սահմանափակում են թափվածքի տարածքը և իրականացնում են հեղուկի ներծծումը: Կենսաբանական հեղուկներ հավաքելու համար օգտագործվում է չեզոք ներծծող նյութ (օրինակ՝ միանգամյա օգտագործման թուղթ կամ հյուսվածքային անձեռոցիկներ): Օգտագործված սորբենտի քանակը բավարարում է լրիվ թափվածքը ներծծելու համար:

2) Վարակված (ներառյալ պոտենցիալ) կենսաբանական հեղուկների թափվածքները մաքրելու ժամանակ սորբենտների հետ միասին լցնում են միջոցի լուծույթ: Անընդունելի են նման թափումները մաքրելը, որոնք զուգորդված չեն ախտահանման հետ:

ա. Չեզոք սորբենտ կիրառելիս՝ թափվածքն ամբողջովին կլանելուց հետո, ոռոգման եղանակով ներմուծում են միջոցի լուծույթ արտաքին եզրերից դեպի աղտոտվածության կենտրոնը՝ կանխելով ցայտերի և ճողփյունների առաջացումը:

բ. Յողացրիչի կիրառման դեպքում միջոցը ցրում են մշակվող մակերեսին հնարավորինս մոտ՝ աէրոզոլների առաջացումը և հեղուկի շաղ տալը կանխելու նպատակով:

3) Ազդեցության պահաժամը ներկայացված է սույն հրահանգի աղյուսակ 3-ում:

4) Սորբենտը հեռացնում են ամբողջ հեղուկը կլանելուց հետո: Սորբենտի հեռացումից անմիջապես հետո իրականացնում են մակերեսի կրկնակի, եզրափակիչ ախտահանում միջոցի աշխատանքային լուծույթով՝ սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված վարակին համապատասխան՝ շփման կամ ոռոգման եղանակով:

5) Ազդեցության պահաժամից հետո ախտահանիչի մնացորդները հեռացնելու համար իրականացնում են խոնավ մաքրում:

ա. Թափվածքի չեզոքացման ստանդարտ հավաքածուն ներառում է միջոցի աշխատանքային լուծույթ,

բ. անհատական պաշտպանության միջոցներ (քիմիական և կենսաբանական դիմացկուն ձեռնոց, պաշտպանիչ ակնոց, դիմակ, շնչադիմակ, խալաթ),

գ. կենսաբանական վտանգի մակնշումով թափոնների փաթեթ, կտրող- ծակող առարկաների օգտահանման համար նախատեսված հերմետիկ կոնտեյներ,

դ. մաքրման պարագաներ (գոգաթիակ, ունեյի, աքցան կամ կտրող- ծակող առարկաների հավաքման այլ լրացուցիչ հարմարանքներ):

6) Կենսաբանական արտադրություններ կամ արյուն պարունակող մաքրման պարագաները օգտահանվում կամ ավտոկլավ են դրվում՝ ըստ գործող կանոնների և նորմատիվների: Առանձին հավաքված կենսաբանական նյութերը (այդ թվում կենսաբանական հեղուկների մեծ թափվածքների հավաքման ժամանակ կլանածը) ախտահանում են փակ կափարիչով տարաների մեջ՝ սույն հրահանգի աղյուսակ 12-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

Աղյուսակ 3

Բժշկական և այլ կազմակերպությունների մակերեսների ախտահանման ռեժիմներ

միջոցի լուծույթով, տարբեր էթիոլոգիայի վարակների դեպքում

Վարակի ծագումնաբանությունը	Մանրեագերծման օբյեկտներ ¹					
	Սենքերի արտաքին մակերեսներ, չոր կահույք, սարքերի և սարքավորումների հանգույցներ և այլն		Սենքերի արտաքին մակերեսներ, կենսաբանական հեղուկներով աղտոտված (մեծ և փոքր թափումներ)		Փափուկ մակերեսներ, այդ թվում՝ գորգեր և հատակի այլ ծածկեր, երեսպատման գործվածքներ, փափուկ կահույք	
	Մշակման եղանակները, Աշխատանքային լուծույթի խտությունը՝ ըստ պատրաստուկի, ազդեցության ժամանակը, %					
	Մաքրում, ոռոգում		Կրկնակի ոռոգում առանց ժամանակային ընդմիջման կամ ոռոգում հաջորդիվ մաքրում		Մաքրում, խոզանակի միջոցով մշակում	
	%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի)	0.1	60	0.25	40	0.1	60
	0.25	20	0.5	20	0.25	20
	0.5	10	0.75	10	0.5	10
Վիրուսային	0.1	60	0.25	60	0.1	60
	0.25	20	0.5	20	0.25	20
	0.5	10	0.75	10	0.5	10
Սնկային (կանդիդոզներ)	0.1	60	0.25	40	0.1	60
	0.25	20	0.75	20	0.25	20
	0.5	10	1.0	10	0.5	10
Սնկային (դերմատոֆիտիաներ),	0.5	30	0.75	30	0.75	30
	0.75	15	1.0	15	1.0	15
Սնկային (բորբոսասնկեր)	0.5	30	0.75	30	0.75	30
	0.75	15	1.0	15	1.0	15
Տուբերկուլոզ ²	0.5	60	1.0	30	0.5	60
	0.75	30	2.0	15	1.0	30
	1.0	15	-	-	2.0	15

Նշում.1- Առարկաների և օբյեկտների մանրամասն ցանկը, ինչպես նաև դրանց մշակման մեթոդաբանությունը բերված են սույն հրահանգի 4.1

2- Թեստավորված *Mycobacterium terrae*-ի վրա:

Աղյուսակ 4

Տարբեր պրոֆիլի բժշկական կազմակերպություններում և այլ հաստատություններում

օբյեկտների ախտահանման ռեժիմները, հիմնական մաքրման ժամանակ միջոցի

լուծույթով

Հաստատության ոլորտը	Լուծույթի խտություն ըստ միջոցի, %	Ազդեցության ժամանակ, րոպե	Մշակման եղանակը
Սոմատիկ բաժանմունք (բացառությամբ միջամտությունների սենյակի)	0.25	20	շփում, ոռոգում
	0.5	10	
Վիրաբուժական, միջամտությունների սենյակ, ատամնաբուժական, մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքներ և սենյակներ, լաբորատորիաներ, վիրահատարաններ, վիրակապարաններ	0.25	30	շփում, ոռոգում
	0.5	15	
Հակատուբերկուլոզային բժշկական կազմակերպություններ	0.5	60	շփում, ոռոգում
	1.0	30	
Մաշկաբանական և սեռավարակաբանական բժշկական կազմակերպություններ	0.5	30	շփում, ոռոգում
	0.75	15	
Մաքրում, անաէրոբ վարակների ուղղությամբ տարվող պայքարի նպատակով	1.0	60	շփում, ոռոգում
	2.0	30	
Ինֆեկցիոն բժշկական կազմակերպություններ ¹	-	-	շփում, ոռոգում
Մանկական հաստատություններ	0.1	30	շփում, ոռոգում
	0.25	20	

Նշում.1- Հիմնական մաքրումը իրականացվում է համապատասխան վարակի ռեժիմի համաձայն:

17. Բժշկական և այլ կազմակերպություններում կիրառվող օժանդակ պարագաներն ու օբյեկտները: Բժշկական և այլ կազմակերպություններում կիրառվող օժանդակ պարագաներն ու օբյեկտները՝ պացիենտի խնամքի պարագաներ, մաքրման պարագաներ, ձեռնոցով ձեռքեր, մշակում են հաշվի առնելով չափսերը՝ մանր, խոշոր, կառուցվածքային նյութը՝ հարթ, ոչ ծակոտկեն (մետաղ, ապակի, պոլիմերային նյութեր, պլաստիկ), ծակոտկեն (ռետին և այլ պոլիմերային նյութեր, գործվածք), աղտոտվածության աստիճանը՝ տեսանելի և առանց տեսանելի աղտոտվածության: Այս առարկաների և օբյեկտների ախտահանումն իրականացնում են շփման և ընկղմման մեթոդով:

18. Մակերեսների մշակման ժամանակ նորմայում լուծույթի ծախսը կոգնում է, շփման եղանակով՝ 100 մլ/մ² մակերես, ոռոգման եղանակով՝ 300 մլ/մ² մակերես (հիդրոպոլտի, ավտոմաքսի), ոռոգման եղանակով՝ 150 մլ/մ² մակերես («Կվազար» տեսակի ցողացրիչ): Օժանդակ պարագաների և օբյեկտների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 5-ում:

19. Պացիենտի խնամքի պարագաներ՝ (մահճակալի հարմարանքներ, նստելատեղ, աստիճան և հարթակ լոգարանի համար, ռետինե գորգեր, զուգարանակոնքի գլխադիր, հենարան զուգարանի սենյակի համար, սառույցի պարկ, ջեռակ, տակդիր

օղեր, շարժական աթոռ-զուգարան, գիշերանոթ, տակդիր անոթ, մեզընդունիչ (այդ թվում տարաներ զուգարանային պարագաների ախտահանման համար), ներքնակների համար պոլիմերային պաշտպանիչ ծածկույթներ, տակդիր մոմլաթ, կեղտոտ սպիտակեղենի համար մոմլաթե պարկեր, մոմլաթե դոշիկ, պացիենտի տեղափոխման հարթակներ, հաշմանդամի սայլակ, ձեռնափայտ, հենակ, քայլակ, մերսիչ, բռնակ, թեքահարթակ):

20. Այլ օժանդակ պարագաներ, որոնք օգտագործվում են բժշկական կազմակերպություններում ընթացիկ աշխատանքներում (ռետինե ձեռնոց, ռետինե և կիրգայե ճոքակոշիկ, պոլիմերային նյութից, կաշվից կամ կաշվի փոխարինիչից հողաթափեր, խաղալիք (փայտե, պլաստմասե, ռետինե, մետաղյա), ռետինե ձեռնոցներ): Մշակման եղանակը՝

1) Մանր պարագաներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ, կանխելով նրանց մակերես դուրս գալը, խոշոր առարկաները, ինչպես նաև կոշիկի արտաքին և ներքին մակերեսները, որոնց ընկղմումը անհնար է, շփում են միջոցի լուծույթի մեջ թրջված լաթով կամ մշակում են ոռոգման եղանակով, համապատասխան սույն հրահանգի աղյուսակ 5-ի:

2) Ախտահանումից հետո արտադրատեսակները պարզաջրում են հոսող ջրով 3 րոպե, որից հետո դրանք չորացնում են: Յուրաքանչյուր պացիենտից հետո բուժաշխատողը փոխում է ձեռնոցը:

21. Արյունով կամ կենսաբանական հեղուկներով ձեռնոցների աղտոտման դեպքում, ձեռնոցները հանելու ընթացքում ձեռքերի աղտոտումից խուսափելու համար, նախապես տեսանելի աղտոտվածությունը մաքրում են միջոցի լուծույթով թրջած տամպոնով (անձեռոցիկով): Մանրէային (այդ թվում՝ տուբերկուլոզ), վիրուսային և սնկային (կանդիդոզ) վարակների դեպքում, այդ թվում՝ եթե վարակիչ նյութ է ընկնում ձեռնոցների վրա, մանրէաբանական լաբորատորիաների բուժաշխատողների ձեռնոցները (քլորոպրենային կաուչուկից, լատեքսից, նեոպրենից, նիտրիլից և քիմիական նյութերի ազդեցության նկատմամբ կայուն այլ նյութերից) ախտահանում են:

22. Մշակման եղանակը՝ ախտահանման բեռնարկի մեջ լցնում են համապատասխան խտության միջոցի աշխատանքային լուծույթ, ձեռնոցները հագին՝ ձեռքերն ամբողջովին ընկղմում են ախտահանիչ լուծույթի մեջ՝ ազդեցության

պահաժամին համապատասխան (Աղյուսակ 5): Ախտահանված ձեռնոցները հանում են և գցում թափոնների օգտահանման համար նախատեսված բեռնարկղի մեջ:

23. Մաքրման պարագաներ՝ մաքրման պարագաներ՝ խոզանակը և հատակի մաքրիչը, ֆլաուները, մոպը, գոգաթիակը, սայլակը, դոյլը, զամբյուղը և բաքը, ինչպես նաև հավաքման մեքենաների տարբեր մասեր, ճաշասեղանների մակերեսների և սպասք լվանալու ճիլպաներ և հավաքման տարբեր պարագաներ:

24. Մշակման եղանակը՝ չափերով ոչ մեծ առարկաներն ընկղմում են անհրաժեշտ խտության միջոցի լուծույթի մեջ այնպես, որ առարկաները 1 սմ-ից ոչ պակաս լուծույթի շերտով ծածկվեն, կանխելով նրանց մակերես դուրս գալը: Խոշոր առարկաները, որոնց մշակումն ընկղմման եղանակով հնարավոր չէ, լուծույթով թրջված լաթով շփում կամ ոռոգում են սույն հրահանգի աղյուսակ 5-ում ներկայացված ախտահանման ռեժիմներին համապատասխան: Գործվածքից առարկաները մշակում են ընկղմման եղանակով՝ 1 կգ չոր գործվածքին 5 լ աշխատանքային լուծույթ հաշվարկով: Պահաժամի ավարտից հետո առարկաները լվանում են ջրով:

Աղյուսակ 5

Բժշկական և այլ կազմակերպություններում օբյեկտների և օժանդակ պարագաների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթով, տարբեր էթիոլոգիայի վարակների դեպքում

Վարակի ծագումնաբանությունը	Մանրեազերծման օբյեկտներ ¹					
	Մետաղներից, պլաստմասից, ապակուց և ռետինից պատրաստված օժանդակ պարագաներ		Մաքրման նյութեր		Կենսաբանական հեղուկներով աղտոտված ձեռնոցներով ձեռքեր (լատեքս, ռետին, պոլիմիլիթրիդ),	
	Մշակման եղանակները, Աշխատանքային լուծույթի խտությունը՝ ըստ պատրաստուկի, ազդեցության ժամանակը, %					
	Մաքրում, ընկղմում		Ընկղմում		Ընկղմում	
	%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի)	0.1	60	0.25	30	1.0	1
	0.25	30	0.5	15		
	0.5	15				
Վիրուսային	0.1	60	0.25	30	1.0	1
	0.25	30				

	0.5	15	0.5	15		
	1.0	10				
Սնկային (կանդիդոզներ)	0.1	60	0.25	30	1.0	1
	0.25	30	0.5	15		
	0.5	15				
Սնկային (դերմատոֆիտներ),	0.5	30	0.5	30	-	-
	0.75	15	0.75	15		
Սնկային (բորբոսասնկեր)	0.5	30	0.75	30	-	-
	0.75	15	1.0	15		
Տուբերկուլոզ ²	0.5	60	0.75	30	3.0	1
	0.75	30	1.0	15		
	1.0	15	-	-		

Նշում.1- Առարկաների և օբյեկտների մանրամասն ցանկը, ինչպես նաև դրանց մշակման մեթոդաբանությունը բերված են սույն Ո.15

2- Թեստավորված *Mycobacteriumterrae*-ի վրա:

25. Սանիտարա-տեխնիկական, բալնոլոգիական և հիդրոմետրոլ սարքավորումներ: Սանիտարա-տեխնիկական սարքավորումներ՝ լոգարաններ, լվացարաններ, զուգարանակոնքեր, միզարաններ, ցնցուղարաններ, լոգախցիկներ և այլն, բալնոլոգիական և հիդրոմետրոլ սարքավորումներ՝ բուժական, ցեխի, հանքային, հիդրոմետրոլ ավազաններ, ՍՊԱ պատիճներ, հիդրոմետրոլ սարքավորումների եզրեր: Միջոցի լուծույթի ծախսի նորման սանիտարա-տեխնիկական սարքավորման մշակման ժամանակ շփման եղանակով կազմում է 100 մլ/մ² մակերես, ոռոգման եղանակով՝ 300 մլ/մ² մակերես հիդրոպուլտի, ավտոմաքսի օգտագործմամբ, 150 մլ/մ² մակերես «Կվազար» տեսակի ցողացրիչի օգտագործմամբ: Ոռոգման եղանակով ախտահանումն իրականացնում են անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ: Սանիտարա-տեխնիկական սարքավորումների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 6-ում:

26. Հուգարանակոնքեր և միզարաններ՝ զուգարանակոնքերի և միզարանների արդյունավետ մշակման համար մակերեսներին առկա կենսաբանական աղտոտվածությունը (կղանք, մեզ և այլն) նախօրոք նվազացնում են, լվանում ջրով: Միջոցի սահմանված խտությամբ և քանակով աշխատանքային լուծույթը (աղյուսակ 6) քսում են մակերեսին, կոնցենտրիկ լուծույթի կիրառման դեպքում, անկախ բժշկական կազմակերպության տեսակից 50 մլ միջոց լցնում են զուգարանակոնքերի կամ

միզարանների մեջ: Իրականացնում են մակերեսի մեխանիկական մաքրում՝ (մոտ 1 րոպե) մաքրման օժանդակ պարագաներով (օրինակ՝ խոզանակ), առավել ուշադրություն դարձնելով դժվար հասանելի տեղերի մշակմանը (զուգարանակոնքի օղագոտու տակ), պահաժամից (աղյուսակ 6) հետո զուգարանակոնքը լվանում են ջրով:

27. Լոգարաններ, լվացարաններ և լոգախցիկներ: Միջոցի սահմանված խտությամբ և քանակով աշխատանքային լուծույթը (աղյուսակ 6) քսում են սարքավորումներին, Իրականացնում են մակերեսի մեխանիկական մաքրում՝ (մոտ 1 րոպե) մաքրման օժանդակ պարագաներով (օրինակ՝ լաթ, սպունգ), առավել ուշադրություն դարձնելով դժվար հասանելի տեղերի մշակմանը (ծորակների և հոսարանների շուրջը), պահաժամից (աղյուսակ 6) հետո ախտահանիչի մնացորդները լվանում են ջրով:

28. Բալնեոլոգիական և հիդրոմերսման սարքավորումներ՝ բալնեոլոգիական և հիդրոմերսոլ սարքավորումների մաքրումն ու ախտահանումն իրականացվում է տվյալ բժշկական կամ այլ կազմակերպության սահմանած կանոնակարգին համապատասխան՝ հաշվի առնելով սարքավորման արտադրողի առաջարկները:

29. Լոգարանի մշակման մեթոդաբանությունը՝ մաքրման նպատակով լոգարանների ու ավազանների պատերին շփման կամ ոռոգման եղանակով (օրինակ՝ լաթ, սպունգ) քսում են սահմանված խտությամբ և քանակով աշխատանքային լուծույթ (աղյուսակ 6), պահաժամից (աղյուսակ 6) հետո ախտահանիչի մնացորդները լվանում են ջրով:

30. Հիդրոմերսման սարքավորումների կոնտուրի մշակման մեթոդաբանությունը՝

- 1) Վաննան լցվում է 18-20°C ջերմաստիճանի ջրով:
- 2) 0.4 %-ոց աշխատանքային լուծույթ պատրաստելու համար ավելացվում է անհրաժեշտ քանակության միջոց (0.4լ կոնցենտրիկ միջոց 100լ ջրին):
- 3) 5 րոպե միացվում է պոմպը՝ ախտահանման նպատակով աշխատանքային լուծույթը համակարգի միջոցով մղելու համար:
- 4) Անջատվում է պոմպը և ախտահանիչ լուծույթը թափվում է վաննայից:
- 5) Վաննան լցվում է մաքուր տաք կամ սառը ջրով:
- 6) Պոմպը միացվում է, ջուրը մղվում է առնվազն 3 րոպե:
- 7) Անջատվում է պոմպը և ջուրը թափվում է վաննայից:

Ժանգոտված (կրային նստվածքներով և այլն) սանիտարա-տեխնիկական սարքավորումները, աղտոտվածությունից նախապես մաքրվում է հատուկ թթուներով լվացող միջոցներով:

Աղյուսակ 6

Բժշկական և այլ կազմակերպություններում սանիտարա-տեխնիկական,
բալնեոլոգիական և հիդրոմեդիցինական սարքավորումների ախտահանման ռեժիմներ
միջոցի լուծույթով, տարբեր էթիոլոգիայի վարակների դեպքում

Վարակի ծագումնաբանությունը	Մանրեագերծման օբյեկտներ ¹							
	Սանիտարա-տեխնիկական սարքավորումներ				Բալնեոլոգիական և հիդրոմեդիցինական սարքավորումների ներքին մակերեսներ			
	Սարքավորումների մակերեսների առանց տեսանելի աղտոտվածության		Սարքավորումների մակերեսների տեսանելի աղտոտվածությամբ		Սարքավորումների մակերեսների առանց տեսանելի աղտոտվածության		Սարքավորումների մակերեսների տեսանելի աղտոտվածությամբ	
	Մշակման եղանակները, Մաքրում, ոռոգում							
	Աշխատանքային լուծույթի խտությունը՝ ըստ պատրաստուկի, ազդեցության ժամանակը, %							
	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի)	0.1	60	0.25	30	0.5	10	0.5	20
	0.25	20	0.5	20			1.0	5
	0.5	10	1.0	5			-	-
Վիրուսային ²	0.1	60	0.25	30	0.5	10	0.5	20
	0.25	20	0.5	20			1.0	5
	0.5	10	1.0	5			-	-
Սնկային (կանդիդոզներ)	0.1	60	0.25	30	0.5	10	0.5	20
	0.25	20	0.5	20			1.0	5
	0.5	10	1.0	5			-	-
Սնկային (դերմատոֆիտներ),	0.5	30	0.75	30	0.5	30	0.75	30
	0.75	15	1.0	15				
Սնկային (բորբոսասնկներ)	0.5	30	0.75	30	-	-	-	-
	0.75	15	1.0	15				
Տուբերկուլոզ ^{2,3}	0.5	60	1.0	30	-	-	-	-
	0.75	30	2.0	20				
	1.0	15	3.0	10				

Նշում.1- Առարկաների և օբյեկտների մանրամասն ցանկը, ինչպես նաև դրանց մշակման
մեթոդաբանությունը բերված են սույն հրահանգի կետ 25

3-Այս տեսակի պաթոգեն միկրոօրգանիզմների առաջացումը շատ դեպքերում կապված է կենսաբանական հեղուկների առկայության հետ:

2- Թեստավորված *Mycobacterium terrae*-ի վրա:

31. Սպիտակեղեն՝ ԲԿ-ներում օգտագործվող սպիտակեղեն, այդ թվում՝ հիվանդի շապիկներ և անկողին, բուժանձնակազմի պաշտպանիչ հագուստ (խալաթներ, գլխարկներ, դիմակներ, գլխաշորեր և այլն), գործվածքից պատրաստված այլ օժանդակ իրեր: Սպիտակեղենի ախտահանման համար միջոցը օգտագործվում է նշված հաշվարկով՝ 5 լ աշխատանքային լուծույթ 1 կգ չոր սպիտակեղենին: Տուբերկուլոզով հիվանդների խնամքի ժամանակ օգտագործվող թաշկինակները, թքամանների առդիր գրպանները (ֆլանելից պատյաններ) ախտահանում են միայն կենսաբանական հեղուկներով աղտոտված սպիտակեղենի ախտահանման ռեժիմներով, որոնք արդյունավետ են տուբերկուլոզի միկոբակտերիայի նկատմամբ: Այդպիսի առարկաների մշակումը ցանկալի է իրականացնել սպիտակեղենի ընդհանուր զանգվածից առանձին: Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթները չունեն սպիտակեցնող հատկություն:

Աղույակ 7

Բժշկական և այլ կազմակերպություններում սպիտակեղենի ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով տարբեր վարակների ժամանակ

Վարակի ծագումնաբանությունը	Օբյեկտի ախտոտվածության աստիճանը	Մշակվող օբյեկտ և մշակման եղանակը					
		ԲԿ-ների սպիտակեղեն ¹					
		Թրջում, ձեռքով և ավտոմատացված լվացմամբ					
		Ջերմաստիճան ² , աշխատանքային լուծույթի խտություն, %- պահաժամ, րոպե					
		18-20°C		35-40°C		50-60°C	
		%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի)	Առանց տեսանելի աղտոտվածության	0.25	30	0.25	20	0.25	20
		0.5	15	0.5	10		
	Տեսանելի աղտոտված	0.5	60	0.5	50	0.5	40
		0.75	30	0.75	20	0.75	10
Վիրուսային ²	Առանց տեսանելի աղտոտվածության	0.25	30	0.25	20	0.25	20
		0.5	15	0.5	10		
		0.5	60	0.5	50	0.5	40

	Տեսանելի աղտոտված	0.75	30	0.75	20	0.75	10
Մնկային (կանդիդոզներ)	Առանց տեսանելի աղտոտվածության	0.25	30	0.25	20	0.25	20
		0.5	15	0.5	10		
	Տեսանելի աղտոտված	0.5	60	0.5	50	0.5	40
		0.75	30	0.75	20	0.75	10
Մնկային (դերմատոֆիտներ),	Առանց տեսանելի աղտոտվածության	0.5	60	0.75	50	0.5	40
		0.75	30	0.75	20		
	Տեսանելի աղտոտված	0.75	60	0.75	50	0.75	40
		1.0	30	1.0	20	1.0	10
Մնկային (բորբոսասնկեր)	Առանց տեսանելի աղտոտվածության	0.5	30	-	-	-	-
		0.75	15				
	Տեսանելի աղտոտված	0.75	60	-	-	-	-
		1.0	30				
Տուբերկուլոզ ⁴	Առանց տեսանելի աղտոտվածության	0.75	60	0.75	50	0.75	40
		1.0	30	1.0	20	1.0	10
	Տեսանելի աղտոտված	2.0	60	2.0	50	2.0	40
		3.0	30	3.0	20	3.0	10

Նշում.1- Այդ թվում՝ բուժանձնակազմի պաշտպանիչ հագուստ (խալաթներ, գլխարկներ, դիմակներ, գլխաշորեր և այլն) առանց տեսանելի աղտոտվածության և աղտոտված արտազատուկներով (խորխ, արտաթորանք, մեզ և այլն), արյունով:

2-Ախտահանման մեթոդաբանությունը (ձեռքով և ավտոմատացված լվացմամբ) թույլ չի տալիս միջոցի օգտագործումը սինթետիկ լվացող միջոցների հետ համատեղ:

3- Կենսաբանական հեղուկներ կամ ոչ օրգանական աղտոտիչներ

4- Թեստավորված *Mycobacteriumterrae*-ի վրա:

32. Սպասք՝ այդ թվում՝ ճաշի և թեյի սպասք (ափսեներ, բաժակներ), դանակներ, պատառաքաղներ, գդալներ:

Սպաքի ախտահանման ժամանակ հաշվի է առնվում մշակվող օբեկտի և պատրաստուկի հատկությունը, ուշադրություն են դարձվում մշակման հետևյալ կանոններին:

1) Չի կարելի համատեղ մշակել տարբեր մետաղներից արտադրատեսակները:

2) Մետաղական և ապակյա արտադրատեսակների մշակման ժամանակ պետք է պահպանել առաջարկվող ազդեցության ժամանակը:

3) Ճաշի սպասքը (այդ թվում՝ մեկանգամյա օգտագործման) ախտահանման փուլից առաջ մաքրում են սննդի մնացորդներից:

33. Ճաշի սպասքը, նախորոք սննդի մնացորդներից մաքրված, ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ 2լ լուծույթ 1 հավաքածուին (սպասք մեկ անձի համար) հաշվարկով: Արտադրատեսակի վրա լուծույթի շերտի հաստությունը առնվազն 1սմ է: Պահաժամի ավարտից հետո, (աղյուսակ 8) առնվազն երեք թուփ տևողությամբ սպասքը լվացվում է մաքուր ջրով:

34. Սպասք լվանալու պարագաները (ճիլոպներ, սպունգներ, խոզանակներ) օգտագործելուց հետո թրջվում է աշխատանքային լուծույթի մեջ, որից հետո լվացվում է ջրով և չորացվում է:

35. Սպասքի լվացման գույքը պահվում է հատուկ հատկացված տեղում:

Աղյուսակ 8

Բժշկական կազմակերպությունների սննդի բլոկներում ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթով, տարբեր էթիոլոգիայի վարակների դեպքում

Վարակի ծագումնաբանությունը	Մշակվող օբյեկտ, մշակման եղանակը, ախտոտվածության աստիճան			
	ԲԿ-ների սննդի բլոկի սպասք թրջում, ձեռքային եղանակ			
	Առանց տեսանելի ախտոտվածության (առանց սննդի, մնացորդների)		Տեսանելի աղտոտված (սննդի մնացորդներ), նախնական մաքրումից հետո	
	Ջերմաստիճան, աշխատանքային լուծույթի խտություն, %- պահաժամ, րոպե			
	%	րոպե	%	րոպե
Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի)	0.25	20	0.5	30
	0.5	10		
Վիրուսային	0.25	20	1.0	30
	0.5	10		
Սնկային (կանդիդոզներ)	0.25	20	1.0	30
	0.5	10		
Սնկային (դերմատոֆիտներ),	0.5	30	1.0	30
	1.0	15		
Սնկային (բորբոսասնկեր)	0.5	30	1.0	15
Տուբերկուլոզ ¹	1.0	30	2.0	30
	2.0	15		

Նշում.1- Թեստավորված *Mycobacteriumterrae*-ի վրա:

36. Օդափոխության և օդորակման համակարգեր: Օդափոխության և օդորակման համակարգերի (կենցաղային օդորակիչներ, սպլիտ-համակարգեր, մուլտիզոնալ-սպլիտ-համակարգեր, տանիքի օդորակիչներ և այլն), մշակումը իրականացվում է համակարգի լրիվ անջատման պայմաններում միջոցի հեղացրմամբ, ընկղմմամբ, աշխատանքային հանգույցները շփվում են սույն հրահանգի աղյուսակ 9-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

37. Ախտահանումը, տհաճ հոտերի չեզոքացումը և օդի լավորակումն իրականացվում է համապատասխան տեխնիկական սարքավորումներով (օրինակ աերոզոլների գեներատորներ և այլն), հեղացրման եղանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 9-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան, միջոցի ծախսի սահմանաչափը ընդունելով 10մլ/մ³: Նախապես իրականացվում է մակերեսների ախտահանում, սենքը հերմետիկացվում է՝ փակվում են լուսամուտները և դռները, անջատվում է ներիոս-արտաձիգ օդափոխանակությունը: Ախտահանումից հետո սենքը օդափոխվում է առնվազն 15 րոպե տևողությամբ:

38. Օդի ախտահանման պրոցեսի ակտիվացման համար աշխատանքային լուծույթի մեջ ավելացվում է 1,2- պրոպիլեն գլիկոլի 5 ծավալային %: Ակտիվացված լուծույթի աշխատանքի ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

Օդի, օդափոխության և օդորակման համակարգերի
ախտահանում միջոցի լուծույթով

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտությունը՝ ըստ պատրաստուկի, %	Ազդեցության ժամանակը, րոպե	Մշակման ձև
Կենտրոնական և կենցաղային օդի լավորակիչների և ընդհանուր օդափոխության սեկցիաներ, օդընդունիչ և օդաբաշխիչներ	0.25	60	Շփում կամ ոռոգում
	Ազդեցության ժամանակը (րոպե)			Ազդեցության ժամանակը (րոպե)	
0.5	15	-	0.5	30	-
1.0	10	-	1.0	15	-
2.0	-	15	2.0	-	30
3.0	-	10	3.0	-	15

Նշում. 1. Թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա:


ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Խմելու ջրով արտադրատեսակի լվացում/ընկղմում սարքավորումից դուրս, մանրակրկիտ բոլոր խոռոչների և խողովակների լվացում ներարկիչի կամ էլեկտրաարտաձայնի օգնությամբ մինչ աշխատանքային լուծույթի լրիվ մաքրումը, 3 րոպեի ընթացքում:



ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում թորած ջրով սարքավորումից դուրս, բոլոր խոռոչների և խողովակների մանրակրկիտ լվացում (ներարկիչի կամ էլեկտրաարտաձայնի օգնությամբ), մինչև խմելու ջրի մնացորդների ամբողջությամբ հեռացումը:



ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Ցանկացած հասանելի մեթոդով չորացում (բժշկական արտադրատեսակից
ամբողջությամբ ջրի հեռացում):

- Նշում. 1.** ՈւՋ մեթոդով մշակում են այն առարկաները, որը թույլատրում է արտադրողը:
2. Կիրառում են ՈՒՁՍ-ի հաճախականության բնութագիրը 35 ± 2 կՀց-ից մինչև 45 ± 2 կՀց միջակայքում
3. Կիրառում են ցանկացած ջերմաստիճան $18-22^{\circ}\text{C}$ –ից մինչև $35-40^{\circ}\text{C}$ միջակայքում

62. Էնդոսկոպներ և դրանց կից գործիքներ: Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրում: Մշակման մեթոդաբանությունը՝ էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումը իրականացվում է առանձին:

1) Սարքավորման մշակումն սկսում են անմիջապես էնդոսկոպիական միջամտություն իրականացնելուց հետո, աշխատելով թույլ չտալ կենսաբանական աղտոտվածությունների չորացում:

2) Տեսանելի աղտոտվածությունները էնդոսկոպի արտաքին մակերեսից, այդ թվում օբյեկտիվից, հեռացնում են միջոցի լուծույթով թրջված գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով: Էնդոսկոպի աշխատանքային մասը շփում են կառավարման բլոկից դեպի դիստալ հատված ուղղությամբ:

3) Էնդոսկոպի խողովակները լվանում են միջոցի աշխատանքային լուծույթով, ընկղմելով լուծույթով տարայի մեջ ճկուն էնդոսկոպի դիստալ հատվածը:

4) Արտադրատեսակը լվանում են խմելու ջրով:

5) Նախնական մաքրումից հետո էնդոսկոպն անջատում են սնուցման աղբյուրից և էնդոսկոպիական արտածծիչից, տեղափոխում են մշակման սենք՝ պահպանելով հակահամաճարակաբանական միջոցառումները (փակ վիճակով տեփուրի վրա կամ կոնտեյնների մեջ):

6) Էնդոսկոպին կից գործիքներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ:

7) Արտադրատեսակները մաքրում են միջոցի լուծույթի մեջ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտերի առաջացում: Արտադրատեսակների խողովակները լվանում են ներարկիչով կամ այլ հատուկ հարմարանքներով:

8) Մաքրումից հետո էնդոսկոպների կից գործիքները լվանում են խմելու ջրով:

63. Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի սխեմա 5-ում:

64. Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախամանրէազերծում՝ ախտահանման հետ չհամակցված: Մշակման մեթոդաբանությունը՝ էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումն իրականացվում է առանձին:

1) Էնդոսկոպը և դրան կից պարագաներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ, ապահովելով ամբողջական շփում արտադրատեսակների մակերեսների հետ, և հարկադրաբար լցնում են բոլոր խողովակները օգնող հարմարանքների միջոցով: Խողովակներից օդի հեռացման համար օգտագործում են ներարկիչ (պոմպ):


2) Պահում են ազդեցության անհրաժեշտ ժամանակը և սկսում դրանց մաքրումը: Էնդոսկոպի և դրան կից պարագաների արտաքին մակերեսը մաքրում են լուծույթի մակերեսի վրա գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտում: Էնդոսկոպի գործիքների և պարագաների մաքրումը իրականացնում են՝ օգտագործելով հատուկ խոզանակներ:

65. Իրականացնում են խողովակների մեխանիկական մաքրում (էնդոսկոպի արտադրողի առաջարկներին համապատասխան), օգտագործելով հատուկ խոզանակներ, մետաղալարե մաքրիչներ, որոնք համապատասխանում են խողովակների տրամագծին ու երկարությանը: Միջոցի աշխատանքային լուծույթներով էնդոսկոպի խողովակների վազման համար օգտագործում են ներարկիչներ կամ այլ հարմարանքներ այդ նպատակների համար, որոնք էնդոսկոպի հետ լինում են նույն լրակազմում: Մեխանիկական մաքրումից հետո էնդոսկոպը և դրան կից պարագաները տեղափոխում են խմելու ջրով տարաների մեջ և լվանում միջոցի մնացորդներից: Էնդոսկոպի, դրա պարագաների վազումը իրականացնում են հաջորդաբար սկզբում խմելու ջրով, այնուհետև՝ թորած:

66. Բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծման (եզրափակիչ) մաքրման որակի հսկողությունը: Արտադրատեսակների նախամանրէազերծման որակը գնահատում են ազոպիրամային կամ ամիդոպիրինային փորձերի միջոցով՝ արյան մնացորդային քանակությունների համար: Հսկման ենթակա է միաժամանակ մշակված նույնանուն արտադրատեսակների 1%-ը (սակայն 3 արտադրատեսակից ոչ պակաս): Արյան մնացորդների հայտնաբերման դեպքում (դրական փորձ)

18°C ջերմաստիճանում

Ճկուն էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակը	Կոշտ էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակը
Գործիքային խողովակը մաքրում են գործիքային խողովակի մաքրման խոզանակով	2	Յուրաքանչյուր դետալ լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	2
Ներքին խողովակները լվանում են ներարկիչով կամ էլեկտրաարտաձիչով	3	Խողովակները լվանում են ներարկիչով	2
Արտաքին մակերեսը լվանում են գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	1		
Էնդոսկոպներին կից գործիքների մակերեսներ			
Արտաքին մակերեսը լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով		Մշակման ժամանակը- 2 րոպե	
Մեխանիկորեն մաքրում են ներքին խողովակները խոզանակներով և մետաղալարային մաքրիչներով		Մշակման ժամանակը- 1.5 րոպե	
Կրկնակի լվանում են ներքին խողովակները միջոցի լուծույթով հատուկ հարմարանքներով			



ԵՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Խմելու ջրում էնդոսկոպների և դրան կից պարագաների ընկղմում, խոռոչների և խողովակների մանրակրկիտ լվացում (ներարկիչի կամ էլեկտրաարտաձիչի օգնությամբ) մինչ աշխատանքային լուծույթի լրիվ մաքրումը, 3 րոպեի ընթացքում:



ՉՈՐՈՐԴ ՓՈԽԼ³

Արտադրատեսակների պարզաջրում թորած ջրով խոռոչների և խողովակների մանրակրկիտ լվացում (ներարկիչի կամ էլեկտրաարտաձիչի օգնությամբ) մինչ խմելու ջրի մնացորդների լրիվ մաքրումը:

- Նշում.** 1. Տվյալ ռեժիմը կիրառվում են բոլոր կոշտ էնդոսկոպների և չկոշտ էնդոսկոպների այն դետալների համար, որի մշակման համար ՈԻՁ մեթոդը թույլատրելի է:
 2. Երկրորդ փուլը կիրառվում է էնդոսկոպային սարքավորումների ձեռքային եղանակով մշակման համար:
 3. Չորրորդ փուլը կիրառվում է միայն նախամանրէագերծման (եզրափակիչ) փուլից հետո:

68. Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների ախտահանում, համակցված նախամանրէագերծման (եզրափակիչ) մաքրման հետ: Մշակման մեթոդաբանությունը՝ էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումն իրականացվում է առանձին:

- 1) Էնդոսկոպը և դրան կից գործիքները ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ, ապահովելով ամբողջական շփում արտադրատեսակների մակերեսների հետ, և հարկադրաբար լցնում են ներքին խողովակները: Խողովակներից օդի հեռացման համար օգտագործում են ներարկիչ (պոմպ):
- 2) Պահում են ազդեցության անհրաժեշտ ժամանակը և սկսում մաքրումը:
- 3) Էնդոսկոպի և դրան կից գործիքների արտաքին մակերեսները մաքրում են լուծույթի մակերեսի վրա գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտում: Գործիքների և էնդոսկոպի պարագաների մաքրումը նույնպես իրականացնում են խոզանակներով: Էնդոսկոպների և նրանց կից գործիքների ներքին խողովակների և հանվող մասերի մեխանիկական մաքրումը իրականացնում են խոզանակներով և համապատասխան չափի մետաղալարե մաքրիչներով:
- 4) Իրականացնում են էնդոսկոպների և գործիքների ներքին խողովակների կրկնակի լվացում լվացող-ախտահանող միջոցի լուծույթով հատուկ հարմարանքներով (ցնցուղող փողեր, լվացող ներարկիչներ, պոմպ կամ լվացող ատրճանակ համապատասխան գլխադիրներով):
- 5) Մեխանիկական մաքրումից հետո էնդոսկոպը և դրան կից գործիքները տեղափոխում են խմելու ջրով տարաների մեջ և լվանում միջոցի մնացորդներից: Էնդոսկոպի և դրան կից գործիքների պարզաջրումը, այդ թվում խողովակները մղման հատուկ հարմարանքներով, իրականացնում են հաջորդաբար. սկզբում հոսող խմելու ջրով, այնուհետև՝ թորած:
- 6) Լվացումից հետո էնդոսկոպի և դրան կից գործիքների արտաքին մակերեսները չորացնում են փափուկ գործվածքով, խողովակների մեջ օդ են փչում օդային ատրճանակներով:
- 7) Նախամանրէազերծման (եզրափակիչ) մաքրման հետ համակցված ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի սխեմա 6-ում:


Սխեմա 6

Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների ախտահանում միջոցի լուծույթներով, համակցված նախամանրէազերծման (եզրափակիչ) մաքրման հետ

Ձեռքային և մեքենայացված եղանակներ^{1,2,3}

ԱՌԱՋԻՆ ՓՈԻԼ


Ախտահանում




Էնդոսկոպների (կամ ամբողջությամբ չընկղմվող էնդոսկոպների համար դրանց ընկղմման թույլատրվող մասերի), գործիքների և դրանց կից պարագաների թրջում միջոցի աշխատանքային լուծույթի մեջ դրանք ամբողջությամբ ընկղմելով և խոռոչներն ու խողովակները լուծույթով լցնելով

Ճկուն և կոշտ էնդոսկոպներ			Էնդոսկոպներին կից գործիքներ		
Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ պատրաստուկի (%)	Վարակի ծագումնաբանությունը		Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ պատրաստուկի (%)	Վարակի ծագումնաբանությունը	
	Մանրէային (տուբերկուլոզից բացի) վիրուսային, սնկային (կանդիդոզ)	Սնկային (դերմատոֆիտիա), տուբերկուլոզ*		Մանրէային (տուբերկուլոզից բացի) վիրուսային, սնկային (կանդիդոզներ)	Սնկային (դերմատոֆիտիա), տուբերկուլոզ*
	Ազդեցության ժամանակը (րոպե)			Ազդեցության ժամանակը (րոպե)	
0.5	30	-	0.5	60	-
0.75	15	-	0.75	30	-
1.0	10	30	1.0	15	60
2.0	-	20	2.0	-	30
3.0	-	10	3.0	-	15

Նշում. *. Թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա:



ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽ⁴




Բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծում
Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթի մեջ,
որտեղ իրականացվել է թրջումը, լուծույթի առնվազն

18°C ջերմաստիճանում


Ճկուն էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակը	Կոշտ էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակը
Գործիքային խողովակը մաքրում են գործիքային խողովակի մաքրման խոզանակով	2	Յուրաքանչյուր դետալ լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	2
Ներքին խողովակները լվանում են ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով	3	Խողովակները լվանում են ներարկիչով	2
Արտաքին մակերեսը լվանում են գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	1		
Էնդոսկոպներին կից գործիքների մակերեսներ			

Արտաքին մակերեսը լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	Մշակման ժամանակը- 2 րոպե
Մեխանիկորեն մաքրում են ներքին խողովակները խոզանակներով և մետաղալարային մաքրիչներով	Մշակման ժամանակը- 1.5 րոպե
Կրկնակի լվանում են ներքին խողովակները միջոցի լուծույթով հատուկ հարմարանքներով	



ԵՐՐՈՐԴ ՓՈԽ

Խմելու ջրում էնդոսկոպների և դրան կից պարագաների ընկղմում, խոռոչների և խողովակների մանրակրկիտ լվացում (ներարկիչի կամ էլեկտրաարտածիչի օգնությամբ) մինչ աշխատանքային լուծույթի լրիվ մաքրումը, 3 րոպեի ընթացքում:



ՉՈՐՐՈՐԴ ՓՈԽ

Արտադրատեսակների պարզաջրում թորած ջրով խոռոչների և խողովակների մանրակրկիտ լվացում (ներարկիչի կամ էլեկտրաարտածիչի օգնությամբ) մինչ խմելու ջրի մնացորդների լրիվ մաքրումը:

Նշում. 1. Տվյալ ռեժիմը կիրառվում են բոլոր կոշտ էնդոսկոպների և չկոշտ էնդոսկոպների այն դետալների համար, որի մշակման համար ՈԻՁ մեթոդը թույլատրելի է:
 2. Կիրառում են ՈԻՁԱ-ի հաճախականության բնութագիրը 35 ± 2 կՀց-ից մինչև 45 ± 2 կՀց միջակայքում
 3. Կիրառում են ցանկացած ջերմաստիճան $18-22^\circ \text{C}$ –ից մինչև $35-40^\circ \text{C}$ միջակայքում
 4. Երկրորդ փուլը կիրառվում է էնդոսկոպային սարքավորումների ձեռքային եղանակով մշակման համար:

69. Ախտահանիչ միջոցի կիրառումը բժշկական արտադրատեսակների մանրեազերծման և ոչ մանրէազերծ միջամտությունների էնդոսկոպների բարձր մակարդակի ախտահանման (ԲՄԱ), այդ թվում՝ էնդոսկոպների համար: Կոշտ և ճկուն էնդոսկոպների բարձր մակարդակի ախտահանում (ԲՄԱ): Մշակման մեթոդաբանությունը՝ բարձր մակարդակի ախտահանումն իրականացնում են ճկուն էնդոսկոպների և դրանց կից պարագաների համար (կափույր, խցափական, թասակ), որոնք օգտագործվում են ոչ մանրէազերծ էնդոսկոպիական միջամտությունների համար:

70. Ոչ մանրէազերծ միջամտությունների էնդոսկոպների բարձր մակարդակի ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 19-ում: Թույլատրվում է կիրառել միջոցի լուծույթ միայն այն էնդոսկոպիկ սարքավորումների

մշակման դեպքում, եթե արտադրողի կողմից թույլատրվում է ջրածնի պերօքսիդ պարունակող միջոցների կիրառումը:

71. Էնդոսկոպները նախնական, եզրափակիչ (եզրափակիչ, ախտահանման հետ համակցված) մաքրումներից հետո ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարաների մեջ, ապահովելով ամբողջական շփում արտադրատեսակների մակերեսի հետ, և հարկադրաբար լցնում են լուծույթով ներքին խողովակները:

72. Ախտահանման պահաժամից հետո միջոցը խողովակներից հեռացնում են մանրէազերծ ներարկիչով կամ հատուկ հարմարանքով օդ մղելով:

73. ԲՄԱ-ից հետո էնդոսկոպը տեղափոխում են ջրով տարայի մեջ և այն լվանում են ախտահանիչ միջոցի մնացորդներից, պահպանելով ասեպտիկայի կանոնները. օգտագործելով մանրէազերծ գործիքներ (ներարկիչ, կորնցանգ) և մանրէազերծ ձեռնոց ձեռքերի պաշտպանության համար:

74. Էնդոսկոպները պետք է ամբողջությամբ ընկղմվեն ջրի մեջ: Լվացման ժամանակը մետաղի և ապակու արտադրատեսակների համար 5 րոպե, ռետինե և պլաստմասե արտադրատեսակների համար 10 րոպե, ճկուն էնդոսկոպների համար 15 րոպե:

75. ԲՄԱ-ից հետո ստամոքս-բարակաղիքային հետազոտությունների էնդոսկոպների պարզաջրումը իրականացնում են խմելու ջրով, բրոնխոսկոպը՝ մանրէազերծ եռացրած կամ հականմանրէային ֆիլտրերով մաքրված ջրով: Յուրաքանչյուր խողովակի լվացման համար օգտագործում են առնվազն 90 մլ ջուր: Զրի յուրաքանչյուր մասնաբաժինը էնդոսկոպի պարզաջրման համար օգտագործվում է մեկ անգամ:

76. Լվացումից հետո հեռացնում են խոնավությունը էնդոսկոպի արտաքին մակերեսներից մանրէազերծ անձեռոցիկով, խողովակներից՝ օդ փչելով կամ օդի ակտիվ ասպիրացիայով:

77. Բժշկական արտադրատեսակների մանրէազերծում: Միջոցի աշխատանքային լուծույթներով մանրէազերծման ենթարկում են միայն մաքուր բժշկական արտադրատեսակները (այդ թվում էնդոսկոպներ և դրանց կից գործիքներ): Մանրէազերծման համար միջոցի մեջ ընկղմելուց առաջ արտադրատեսակների վրայից հեռացնում են խոնավության մնացորդները:

78. Թույլատրվում է կիրառել միջոցի լուծույթ միայն այն էնդոսկոպիկ սարքավորումների մշակման համար, եթե արտադրողի կողմից թույլատրվում է ջրածնի պերօքսիդ պարունակող միջոցների կիրառումը:

79. Միջոցը չկիրառել ածխածնային պողպատից, պղնձի և պղնձի համաձուլվածքներից, ալյումինից և դրա համաձուլվածքներից, ցածր խառնուրդով պողպատներից՝ առանց պաշտպանիչ ծածկույթի, ինչպես նաև վնասված պաշտպանիչ շերտով արտադրատեսակների համար:

80. Մանրէազերծ էնդոսկոպները պահում են մանրէներով երկրորդային բաղարկումը բացառող պայմաններում, հատուկ պահարանի մեջ՝ չորացման և ասեպտիկ միջավայրում 72 ժամը չգերազանցող ժամկետի ընթացքում պահելու համար: Բժշկական արտադրատեսակների մանրէազերծման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 19-ում:

81. Ճկուն և կոշտ էնդոսկոպներ և դրանց կից գործիքներ: Մշակման մեթոդաբանություն՝ էնդոսկոպիական սարքավորումների մանրէազերծումն իրականացնում են մանրէազերծ էնդոսկոպիական միջամտությունների ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց պարագաների համար:

1) Էնդոսկոպները, դրանց պարագաները և գործիքները նախնական, եզրափակիչ (եզրափակիչ, ախտահանման հետ համակցված) մաքրումներից հետո ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով մանրէազերծ տարաների մեջ, ապահովելով ամբողջական շփում արտադրատեսակների մակերեսների հետ, և հարկադրաբար լցնելով ներքին խողովակները:

2) Մանրէազերծման պահաժամից հետո միջոցի լուծույթը հեռացնում են խողովակներից մանրէազերծ ներարկիչով կամ հատուկ հարմարանքով օդ մղելով:

3) Մանրէազերծումից հետո էնդոսկոպը տեղափոխում են մանրէազերծ ջրով տարայի մեջ և լվանում այն ախտահանիչ միջոցի մնացորդներից, պահպանելով ասեպտիկայի կանոնները. օգտագործելով մանրէազերծ գործիքներ (ներարկիչ, կորնցանգ) և մանրէազերծ ձեռնոցներ ձեռքերի պաշտպանության համար:

82. Լվացման ժամանակը մետաղյա և ապակյա արտադրատեսակների համար 5 րոպե է, ռետինե և պլաստմասե արտադրատեսակների համար՝ 10 րոպե: Էնդոսկոպների և դրանց կից պարագաների լվացման ժամանակ օգտագործվում է միայն մանրէազերծ ջուր: Մանրէազերծ տարան և մանրէազերծ ջրի մասնաբաժինը

պարզաջրման համար օգտագործում են մեկ անգամ: Լվացումից հետո էնդոսկոպի արտաքին մակերեսներից խոնավությունը հեռացնում են մանրէազերծ անձեռոցիկով, խողովակներից՝ ակտիվ ասպիրացիայի միջոցով, միացնելով մանրէազերծ փողը վակուումային արտածծիչին:

83. Բժշկական արտադրատեսակներ: Մշակման մեթոդաբանություն՝ մաքուր բժշկական արտադրատեսակները ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով մանրէազերծ տարայի մեջ, հարկադրաբար լցնում են բոլոր խողովակները օգնող հարմարանքների միջոցով (ներարկիչ, կաթոցիկ): Ամբողջությամբ հեռացնում են օդի պղպակները:

1) Քանդվող մասերը ընկղմում են առանձնացված վիճակում, փականային մասեր ունեցող գործիքներն ընկղմվում են բաց վիճակում, մի քանի աշխատանքային շարժում անելով՝ փականի դժվար հասանելի մասեր լուծույթի ներթափանցումն ապահովելու նպատակով: Լուծույթի շերտի հաստությունը արտադրատեսակների վրա պետք է լինի առնվազն 1 սմ:

2) Պահում են անհրաժեշտ ազդեցության ժամանակը:

3) Մանրէազերծման պահաժամից հետո միջոցը խողովակներից հեռացնում են մանրէազերծ ներարկիչով կամ հատուկ հարմարանքով օդ մղելու միջոցով:

4) Մանրէազերծումից հետո արտադրատեսակները տեղափոխում են մանրէազերծ ջրով լի տարայի մեջ և լվանում դրանք ախտահանիչ միջոցի մնացորդներից, պահպանելով ասեպտիկայի կանոնները՝ օգտագործելով մանրէազերծ գործիքներ (ներարկիչ, կորնցանգ) և մանրէազերծ ձեռնոցներ ձեռքերի պաշտպանության համար: Բժշկական արտադրատեսակներն ամբողջությամբ պետք է ընկղմվեն ջրի մեջ: Մետաղյա և ապակյա արտադրատեսակների լվացման ժամանակը 5 րոպե է, ռետինե և պլաստմասե արտադրատեսակներինը՝ 10 րոպե: Բժշկական արտադրատեսակների լվացման ժամանակ օգտագործում են միայն մանրէազերծ ջուր:

5) Մանրէազերծ տարան և մանրէազերծ ջրի մասնաբաժինը պարզաջրման համար օգտագործում են մեկ անգամ: Լվացված մանրէազերծ արտադրատեսակները հանում են ջրից և տեղավորում մանրէազերծ գործվածքի վրա: Խողովակներից ջուրը հեռացնում են մանրէազերծ ներարկիչով կամ այլ հատուկ հարմարանքով և դասավորում արտադրատեսակները մանրէազերծ մանրէազերծման տուփի մեջ մանրէազերծ գործվածքի վրա:

Բժշկական արտադրատեսակների մանրեագերծման և ոչ մանրեագերծ միջամտությունների էնդոսկոպների բարձր մակարդակի ախտահանման (ԲՄԱ), այդ թվում՝ էնդոսկոպների ախտահանման ռեժիմները միջոցի աշխատանքային լուծույթով

Մշակվող արտադրատեսակի տեսակը	Լուծույթի ջերմաստիճանը, °C	Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ պատրաստուկի, %	Ազդեցության ժամանակը, րոպե
Բարձր մակարդակի ախտահանում (ԲՄԱ)			
Կոշտ և ճկուն էնդոսկոպներ	20±2	34	5
Մանրեագերծում			
Ապակուց, մետաղից, պլաստմասից, բնական և սինթետիկ կաուչուկի հիմքով ռետինից (ներառյալ փականային մասեր ունեցող, խողովակներով և խողովակներով առարկաներ) արտադրատեսակներ, այդ թվում վիրաբուժական և ատամնաբուժական գործիքներ (ներառյալ պտտվող), ատամնաբուժական նյութեր, կոշտ և ճկուն էնդոսկոպներ և դրանց կից գործիքներ	20±2	35	60

Նշում- 1. Թույլատրվում է մշակել միայն կոռոզիակայուն մետաղներից արտադրատեսակները (բարձր լեգիրացված, գործիքային լեգիրացված քրոմի բարձր պարունակությամբ), պաշտպանական ծածկույթով տիտանի և նրա համաձուլվածքների, պաշտպանական ծածկույթով ածխածնային պողպատ, պաշտպանական ծածկույթով պղնձի և ալյումինի հիմքով գունավոր մետաղների և համաձուլվածքների, ռետին (բացառությամբ սինթետիկ), ապակյա և էնդոսկոպների արտադրողի կոցմից թույլատրված մշակում ջրածնի պերօքսիդ պարունակող միջոցներով:

4. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

84. Միջոցով աշխատել չի թույլատրվում 18 տարեկանից ցածր, ալերգիկ հիվանդություններ ունեցող անձանց, հղի կանանց և կերակրող մայրերին:

85. Միջոցով աշխատում են՝ օգտագործելով հետևյալ անհատական պաշտպանության միջոցները (ԱՊՄ).

1) Մաշկի պաշտպանության միջոցներ՝

ա. պաշտպանիչ խալաթ կամ համազգեստ, քիմիապես կայուն ձեռնոցներ կաուչուկից, լատեքսից, պոլիվինիլքլորիդից և այլն, որոնք ապահովում են համապատասխան պաշտպանություն հիմնային վնասող նյութերից, ինչպես նաև ախտածին մանրէներից,
բ. ոտքերի պաշտպանության միջոցներ (մեկանգամյա կիրառության միջոցներ կամ ռետինե ճոքակոշիկներ):

2) Աչքերի պաշտպանության միջոցներ՝

ա. ակնոց կամ դիմակ, որոնք ապահովում են պաշտպանություն քիմիական ախտահանիչների ցայտումից, ինչպես նաև ախտածին մանրէներ պարունակող հեղուկների ցայտումից,
բ. վահանակներ, էկրաններ:

3) Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ՝

ա. քիմիական ախտահանիչների գոլորշիներից, ինչպես նաև ախտածին մանրէներից (օդակաթիլային ճանապարհով փոխանցվող օրգանիզմների առաջացման հնարավորության դեպքում) պաշտպանություն ապահովող դիմակներ,
բ. «B» մակնիշի պատրոնով РПГ-67 կամ РУ-60 М տեսակի ունիվերսալ շնչադիմակներ:

4) Շփման, ընկղմման և թրջման եղանակով, այդ թվում արյան և այլ կենսաբանական հեղուկների քիչ քանակի թափվածքների դեպքում, օբյեկտների ախտահանումն իրականացվում է մարդկանց ներկայությամբ, առանց շնչառական օրգանների պաշտպանության միջոցների: Ախտահանում իրականացնող անձնակազմի համար պարտադիր է մաշկի անհատական պաշտպանության միջոցների (պաշտպանիչ խալաթ, ձեռնոց) օգտագործումը:

5) Ոռոգման եղանակով մշակման ժամանակ անձնակազմն օգտագործում է շնչառական օրգանների («B» մակնիշի պատրոնով РПГ-67 կամ РУ-60М տեսակի ունիվերսալ շնչադիմակներ), աչքերի (հերմետիկ պաշտպանիչ ակնոց), մաշկային ծածկույթների (պաշտպանիչ խալաթ, ձեռնոց) անհատական պաշտպանության միջոցներ: Մշակումն իրականացվում է պացիենտների բացակայությամբ:

6) Կենսաբանական հեղուկների տարալցումներ պարունակող մակերեսների ախտահանումն իրականացնում են պաշտպանության միջոցների ամբողջական հավաքածուով, որը ներառում է

ա. Մաշկային ծածկույթների ԱՊՄ (պաշտպանիչ խալաթ կամ համազգեստ, ձեռնոցներ),

բ. շնչառական օրգանների ԱՊՄ (պաշտպանիչ դիմակներ կամ շնչադիմակներ),
գ. աչքերի ԱՊՄ (հերմետիկ պաշտպանիչ ակնոցներ, վահանակներ, էկրաններ),
դ. ոտքերի ԱՊՄ (մեկանգամյա օգտագործման միջոցներ կամ ռետինե ճտկակոշիկներ):

7) Բժշկական արտադրատեսակների ախտահանման համար միջոցի աշխատանքային լուծույթներով տարաները կափարիչով սերտ փակվում են :

8) Միջոցը չեն խառնում այլ ախտահանիչների հետ:

9) Միջոցով աշխատանքներ իրականացնելիս խստորեն պահպանում են անձնական հիգիենայի կանոնները: Աշխատանքից հետո դեմքը և ձեռքերը լվանում են օճառով:

10) Ոռոգման եղանակով միջոցի հետ աշխատանքների ավարտից հետո սենքը օդափոխվում է:

5. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

86. Միջոցը քիչ վտանգավոր է, սակայն ոռոգման եղանակով աշխատանքային լուծույթների պատրաստման ժամանակ նախազգուշական միջոցառումները չպահպանելու դեպքում հնարավոր է առաջանան վերին շնչառական օրգանների (չորություն, հազ, կոկորդում քերծվածության զգացում) և աչքերի (արցունքահոսություն, ծակծկոց) գրգռում:

87. Միջոցը աչքերի մեջ լցվելիս աչքերն անհապաղ լվանում են հոսող ջրով 10-15 րոպե կամ 2 % սոդայի լուծույթով, հետո կաթեցնում նատրիումի սուլֆացիլի 30 %-ոց լուծույթ: Կոնտակտային լինզաներ կրողները մշակումից 5 րոպե առաջ հանում են, այնուհետև շարունակում են լվանում աչքերը: Անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

88. Միջոցը մաշկի վրա լցվելու դեպքում լվանում են մեծ քանակությամբ ջրով 10-15 րոպե:

89. Շնչառական օրգանների գրգռման ժամանակ, բերանը ողողում են ջրով, այնուհետև նշանակում են ողողումներ կամ տաք խոնավ ինհալացիաներ 2 %-ոց նատրիումի հիդրոկարբոնատի լուծույթով: Բթային շնչառության խանգարման

դեպքում օգտագործում են Էֆեդրինի 2 %-ոց լուծույթ, ըմպանի ախտահարման դեպքում՝ լուծույթն ռեժիմ և տաք կաթ սողայով և հանքային ջուր: Անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

90. Միջոցը ստամոքսի մեջ հայտնվելու ժամանակ խմում են մի քանի բաժակ ջուր փսխում չառաջացնելով: Անհապաղ դիմում են բժշկի:

6. ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

91. Փաթեթավորված միջոցի տեղափոխումն ու պահպանումն իրականացվում է OCT 6-15-90.4 համաձայն:

92. Միջոցը փոխադրվում է արտադրողի բնօրինակ փաթեթավորմամբ տրանսպորտի բոլոր միջոցներով՝ բեռների փոխադրման կանոնների համաձայն, որոնք գործում են տրանսպորտի այդ միջոցների վրա և երաշխավորում են միջոցի և տարողության պահպանվածությունը:

93. Միջոցը պահպանում են արտադրողի սերտ փակված տարայի մեջ, մութ և չոր տեղերում, արևի ուղիղ ճառագայթներից հեռու, -20°C -ից մինչև $+30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում: Թույլատրվում է տեղափոխումը բացասական ջերմաստիճանի դեպքում:

7. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐ

94. Ախտահանիչ միջոցը հսկվում է որակի հետևյալ ցուցանիշներով՝ արտաքին տեսք, խտությունը 20°C ջերմաստիճանում, միջոցի (PH) ջրածնային ցուցիչ, ՊՀՄԳ զանգվածային բաժինը, ջրածնի պերօքսիդ և ՉԱՄ գումարային: Դրանցից յուրաքանչյուրի համար հսկվող ցուցանիշները և նորմերը ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 20-ում:

Աղյուսակ 20

Ախտահանիչ միջոցի որակի ցուցանիշներ

Ցուցանիշի անվանում	Նորմա
Արտաքին տեսքը	Թափանցիկ հեղուկ անգույնից մինչև դեղին գույնի
Խտությունը 20°C ջերմաստիճանում, գ/սմ ³	1.05 ± 0.05
Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը, pH	4.0 ± 0.5
ՉԱՄ-ի զանգվածային բաժինը (N,N-դիոկտիլդիմեթիլամոնիումի քլորիդ, դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, ակլիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ), գումարային, %	21.0 ± 1.5

Պոլիհեքսամեթիլգուանիդին հիդրոքլորիդի զանգվածային բաժինը, %	2.0±0.2
Ջրածնի պերօքսիդի զանգվածային բաժինը, %	18.0±1.5

95. Միջոցի արտաքին տեսքը որոշվում է ակնադիտորեն: Դրա համար 30-32 մմ ներքին տրամագծով անգույն ապակուց փորձանոթի մեջ մինչև կեսը լցնում են միջոցի լուծույթ և դիտում են արտացոլված կամ անցողիկ լույսի տակ:

96. Խտությունը 20°C ջերմաստիճանում չափվում է ԳՕՍՍ 18995.1-ին համապատասխան:

97. Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշի որոշում, միջոցի pH: Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը որոշում են պոտենցիոմետրիկ մեթոդով՝ ըստ ԳՕՍՍ Ռ 50550 կամ հաջորդիվ ներկայացված մեթոդով:

1) Սարքավորումներ, նյութեր, ռեակտիվներ՝

ա. ցանկացած մակնիշի pH-մետր՝ 0.1 չգերազանցող սխալանքով,

բ. 50 սմ³ տարողությամբ ապակե բաժակ՝ ըստ ԳՕՍՍ 25336:

2) Փորձարկման իրականացում՝ բաժակի մեջ լցնում են (30-40 սմ³ ծավալով) միջոց և pH-մետրով, համաձայն սարքի հրահանգի, չափում են pH-ը:

98. ՉԱՄ (ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ, N,N-դիոկտիլդիմեթիլամոնիումի քլորիդ, N,N-դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ,) գումարային զանգվածային բաժնի որոշում:

1) Սարքավորումներ, ռեակտիվներ, նյութեր՝

ա. ընդհանուր նշանակության 2-րդ դասի լաբորատոր կշեռք ըստ ԳՕՍՍ 53228-2008՝ 200 գ կշռման առավելագույն սահմանով,

բ. բյուրետ 1-3-2-25-0.1,

գ. փորձանոթ Кн 1-250-29/32 ТХС տիպի՝ ըստ ԳՕՍՍ 25336՝ հղկված խցանով,

դ. ծծմբական թթու ըստ ԳՕՍՍ 4204,

ե. քլորոֆորմ ըստ ԳՕՍՍ 20015,

զ. նատրիումի դոդեցիլսուլֆատ ըստ ТУ 6-09-64, 0,004 Ն ջրային լուծույթ,

է. նատրիումի սուլֆատ տասջրանոց, մաքուր հետազոտության համար (ՄՀՀ) ըստ ԳՕՍՍ 4171,

ը. մեթիլեն երկնագույն ըստ ТУ 6-09-29,

թ. ցետիլաիրիդինիումի քլորիդ 1-ջրային՝ հիմնական նյութի 99%-ից ոչ պակաս պարունակությամբ «Մերկ» (Գերմանիա) ընկերության արտադրության կամ նմանատիպ որակի ռեակտիվ ըստ գործող նորմատիվային փաստաթղթերի, 0.004 Ն ջրային լուծույթ,

ժ. թորած ջուր ըստ ԳՕՍՏ 6709:

2) Հետազոտության նախապատրաստում

ա. ինդիկատորի, ցետիլաիրիդինիումի քլորիդի և նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթների պատրաստում.

բ. Ինդիկատորի լուծույթի պատրաստման համար 1 դմ³ տարողությամբ չափիչ անոթի մեջ լցնում են 30 սմ³ 0.1%-ոց մեթիլենային կապույտի ջրային լուծույթ, 7.0 սմ³ խտացրած ծծմբական թթու, 110 գ նատրիումի սուլֆատ տասջրանոց և թորած ջրի ծավալը հասցնում են մինչև 1 դմ³:

գ. ցետիլաիրիդինիումի քլորիդի 0.004Ն լուծույթը պատրաստում են 100 սմ³ տարողությամբ փորձանոթի մեջ թորած ջրում մինչև 0,0002 գ ճշգրտությամբ վերցված ցետիլաիրիդինիումի քլորիդ 1-ջրային 0.143 գ կշռվածքի լուծմամբ և ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ,

դ. նատրիումի դոդեցիլսուլֆատի 0.004Ն լուծույթը պատրաստում են 100 սմ³ տարողությամբ փորձանոթի մեջ թորած ջրում նատրիումի դոդեցիլսուլֆատի 0.116 գ կշռվածքի լուծմամբ և ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ:

ե. նատրիումի դոդեցիլսուլֆատի 0.004Ն լուծույթի շտկիչ գործակցի որոշում:

99. 250 սմ³ տարողությամբ կոնաձև կոլբայի մեջ 10 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթին ավելացնում են 40 սմ³ թորած ջուր, 20 սմ³ ինդիկատորի լուծույթ և 15 սմ³ քլորոֆորմ: Առաջացած երկֆազ համակարգը տիտրում են ցետիլաիրիդինիումի քլորիդի լուծույթով՝ փակ կափարիչով փորձանոթի ինտենսիվ թափահարմամբ, մինչև ներքևի քլորոֆորմային շերտի գունազրկումը: Տիտրումն իրականացնում են ցերեկային լուսավորության ներքո: Երկֆազ համակարգի գույնը որոշում են անցողիկ լույսի տակ:

100. Հետազոտության իրականացում:

1) 100 սմ³ տարողությամբ չափիչ փորձանոթի մեջ մինչև 0.0002 գր ճշգրտությամբ վերցված հետազոտվող նմուշի 0.5-ից մինչև 0.7 գ կշռվածքը լուծում են թորած ջրում՝ ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ: 250 սմ³ տարողությամբ կոնաձև կոլբայի մեջ լցնում

են 5 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթ, ավելացնում են 45 սմ³ թորած ջուր, 20 սմ³ ինդիկատորի լուծույթ և 15 սմ³ քլորոֆորմ: Թափահարման արդյունքում ստացվում է երկֆազ համակարգ՝ կապույտ գույտ ներկված ներքևի քլորոֆորմային շերտով: Այն տիտրում են միջոցի պատրաստի լուծույթով՝ փակ կափարիչով փորձանոթն ինտենսիվ թափահարելով, մինչև ներքևի քլորոֆորմային շերտի գունազրկումը: Տիտրումն իրականացնում են ցերեկային լուսավորության ներքո: Երկֆազ համակարգի գույնը որոշում են անցողիկ լույսի տակ:

2) Արդյունքների մշակում:

ՉԱՄ զանգվածային բաժինը (X) տոկոսներով, որոշում են հետևյալ բանաձևով.

$$X = \frac{0.00137 \cdot V \cdot K \cdot 100}{V_1 \cdot m} \times 100\%$$

որտեղ.

0.00137 – ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի N,N-դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, N,N-դիոկտիլդիմեթիլամոնիումի քլորիդ, միջին զանգված, որը համապատասխանում է ուղիղ $C(C_{12}H_{25}SO_4Na)=0.004$ մոլ/դմ³ (0.004Ն) նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի 1 սմ³ -ին, գր,

V – $C(C_{12}H_{25}SO_4Na)=0.004$ մոլ/դմ³ (0.004Ն) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի տիտրվող լուծույթի ծավալ, 5 սմ³,

K – $C(C_{12}H_{25}SO_4Na)=0.004$ մոլ/դմ³ (0.004Ն) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի տիտրվող լուծույթի շտկիչ գործակից,

100 – հետազոտվող նմուշի նոսրացման գործակից,

V₁ – միջոցի լուծույթի ծավալ, որը ծախսվել է տիտրման ժամանակ, սմ³,

m – հետազոտվող նմուշի զանգված, գ:

101. Որպես հետազոտության արդյունք ընդունում են երեք որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունները չպետք է գերազանցեն թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.3%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 4.0\%$ ՝ $P=0.95$ հավանականության վստահելի միջակայքում:

102. Պոլիհեքսամեթիլգուանիդին հիդրոքլորիդի զանգվածային բաժինի որոշում

1) Սարքավորումներ, ռեակտիվներ, նյութեր՝

ա. ընդհանուր նշանակության 2-րդ դասի լաբորատոր կշեռք ըստ ԳՕՍՏ 53228-2008՝ 200 գ կշռման առավելագույն սահմանով,

բ. ֆոտոկոլորիմետր КФК-2 կամ այլ ապրանքանիշի նմանատիպ մետրոլոգիական քնույթագրերով,

գ. չափիչ կոլբաներ 2-25-2, 2-100-2 ըստ՝ ԳՕՍ 1770,

դ. կաթոցիկներ 4-1-0.1, 4-1-1, 6-1-5, 6-1-10 ըստ՝ ԳՕՍ 29169,

ե. Պոլիդեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդի ստանդարտ նմուշ РОО ИЭТП՝ հիմնական նյութի 99,0%-ից ոչ պակաս պարունակությամբ,

զ. ցետիլաիրիդինիումի քլորիդ 1-ջրային՝ հիմնական նյութի 99%-ից ոչ պակաս պարունակությամբ «Մերկ» (Գերմանիա) ընկերության արտադրության կամ նմանատիպ որակի ռեակտիվ ըստ գործող նորմատիվային փաստաթղթերի

է. Էոզին Н (ինդիկատոր) ըստ ТУ 6-09-183-75, ջրային լուծույթի 0.5 զանգվածային բաժնով,

ը. թորած ջուր ըստ ԳՕՍ 6709:

2) Հետազոտության նախապատրաստում

ա. ներկանյութի (Էոզին Н) 0,05% զանգվածային բաժնով լուծույթի նախապատրաստում: Ներկանյութի լուծույթը պատրաստում են 50 մգ Էոզինը 100 սմ³ թորած ջրի մեջ լուծելով, կիրառում են թարմ պատրաստված լուծույթ:

բ. Հիմնական տրամաչափման լուծույթի պատրաստում:

Պոլիհեքսամեթիլգուանիդին հիդրոքլորիդի ստանդարտ նմուշի 0.100 գ կշռուկը, վերցված 0.0002 գ ճշգրտությամբ, քանակական տեղափոխում են 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ և լուծում են թորած ջրում, ծավալը հասցնելով մինչև նիշը: Այնուհետև 1 սմ³ ստացված լուծույթից տեղափոխում են 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ, ավելացնում են 0.0002 գ ճշգրտությամբ վերցված ցետիլաիրիդինիումի քլորիդ 1-ջրայինի 0.011 գ կշռուկը, թորած ջուրը ավելացնում են կոլբայի ծավալի 2/3, պարունակությունը խառնում են մինչև կշռուկի ամբողջությամբ լուծվելը և լուծույթի ծավալը թորած ջրով հասցվում է մինչև նիշը:

103. Տրամաչափական գրաֆիկի կառուցում

1) Հիմնական տրամաչափման լուծույթից պատրաստում են 0.1, 0.2, 0.3, 0.4 մկգ/սմ³ խտությամբ աշխատանքային տրամաչափման լուծույթներ: Դրա համար 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ 1, 2, 3, 4 սմ³ հիմնական տրամաչափման լուծույթին համապատասխանաբար ավելացնում են 10 սմ³ թորած ջուր, այսինքն 9, 8, 7, 6 սմ³ և 4-ական սմ³ Էոզին Ն:

- 2) Բոլոր կոլբաների պարունակությունը թորած ջրով հասցվում է մինչև նիշը:
- 3) Խառնելուց հետո այս բոլոր լուծույթները ֆոտոմետրիկ համեմատում են համեմատական նմուշի հետ:
- 4) Համեմատական նմուշի պատրաստման համար 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ տեղադրում են 10 սմ³ թորած ջուր և ավելացնում են 4 սմ³ Էոզին Ն-ի լուծույթ: Լուծույթի ծավալը թորած ջրով հասցվում է մինչև նիշը:
- 5) Ֆոտոմետրվող տարաչափման նմուշներում պոլիհեքսամեթիլգուանիդին հիդրոքլորիդի խտությունը 0.1, 0.2, 0.3 և 0.4 մկգ/սմ³ է:
- 6) Օպտիկական խտությունը որոշվում է 50 մմ կլանող շերտի հաստությամբ կյուվետներում 540 նմ ալիքի երկարությամբ նմուշին ներկ ավելացնելուց 5-7 րոպե:
- 7) Օգտագործելով աշխատանքային տրամաչափման լուծույթների ֆոտոմետրիայի արդյունքները կառուցվում է տրամաչափման գրաֆիկ, արսիսների առանցքի վրա տեղադրում են խտության արժեքը, օրդինատների առանցքի վրա՝ օպտիկական խտության մեծությունը: Գծապատկերը ուղղագիծ է խտության 0.1 մկգ/սմ³ մինչև 0.4 մկգ/սմ³ միջակայքում:

104. Հետազոտության իրականացում

- 1) 100 սմ³ տարողությամբ չափիչ փորձանոթի մեջ մինչև 0.0002 գր ճշգրտությամբ վերցված հետազոտվող լուծույթի նմուշի 0.15-ից մինչև 0.25 գ կշռվածքը լուծում են թորած ջրում՝ ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ (լուծույթ 1):
- 2) 1 սմ³ լուծույթ 1 տեղավորում են 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ և լուծույթի ծավալը թորած ջրով հասցվում է մինչև նիշ (լուծույթ 2):
- 3) 100 սմ³ տարողությամբ չափիչ փորձանոթի մեջ տեղավորում են 40 սմ³ լուծույթ 2, ավելացնում են 4 սմ³ Էոզին Ն-ի լուծույթ, լուծույթի ծավալը թորած ջրով հասցվում է մինչև նիշ և 5-7 րոպե հետո որոշում են հետազոտվող լուծույթների նմուշների օպտիկական խտությունը: Չափումն իրականացվում է նմուշի հետ համեմատաժ:
- 4) Տրամաչափման գրաֆիկով գտնում են հետազոտվող նմուշներում պոլիհեքսամեթիլգուանիդին հիդրոքլորիդի խտությունը:
- 5) Ընդացակարգերի ճշգրտությունը բարձրացնելու համար, տրամաչափման գրաֆիկի կառուցումը և հետազոտվող նմուշի լուծույթների օպտիկական խտությունը որոշվում է զուգահեռ:

105. Արդյունքների մշակում

Պոլիհեքսամեթիլգուանիդին հիդրոքլորիդի զանգվածային բաժինը (X) տոկոսներով որոշում են հետևյալ բանաձևով.

$$X = \frac{C \cdot P \cdot 100}{m \cdot 1000000} = \frac{C \cdot 2.5}{m}$$

Որտեղ՝

C-ն լուծույթի ֆոտոմետրիկ նմուշում տրամաչափման գրաֆիկով գտնված պոլիհեքսամեթիլգուանիդին հիդրոքլորիդի պարունակությունն է, մկգ/սմ³,

P-ն նոսրացում 25000 անգամ,

m-ն հետազոտվող նմուշի զանգված,

Որպես հետազոտության արդյունք ընդունում են երեք որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունները չպետք է գերազանցեն թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.3%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է ±6.0%՝ 0.95 հավանականության վստահելի միջակայքում:

106. Ջրածնի պերօքսիդի զանգվածային բաժինի որոշումը

1) Սարքավորումներ, ռեակտիվներ, նյութեր՝

ա. լաբորատոր կշեռք ըստ ԳՕՍՏ 53228-2008՝ 200 գ կշռման առավելագույն սահմանով,

բ. մեխանիկական վայրկյանաչափ ТУ 25-1894.003-90,

գ. կոնաձև կոլբա 100 մլ տարողությամբ ըստ՝ ԳՕՍՏ 1770,

դ. 25 սմ³ տարողությամբ բյուրետներ 0.1 սմ³ բաժանման արժեքով ըստ՝ ԳՕՍՏ 29251,

ե. կաթոցիկներ 4-1-0.1, 4-1-1, 6-1-5, 6-1-10 ըստ՝ ԳՕՍՏ 29169,

զ. չափիչ գլաններ 25 սմ³ տարողությամբ ըստ՝ ԳՕՍՏ 1770,

է. կաթոցիկներ 1-25 սմ³ տարողությամբ ըստ՝ ԳՕՍՏ 29227,

ը. չափիչ կոլբա 1 լ տարողությամբ ըստ՝ ԳՕՍՏ 1770,

թ. կշռման համար բաժակիկ CB-14/8 ըստ՝ ԳՕՍՏ 25336,

ժ. կալիումի պերմանգանատ, 0.1 Н լուծույթ (ֆիքսանալ) ըստ՝ ТУ 2642-001-07500602-97 կամ այլ իրավական փաստաթղթի,

ի. ծծմբական թթու ըստ՝ ԳՕՍՏ 4204,

լ. թորած ջուր ըստ ԳՕՍՏ 6709,

107. Հետազոտության իրականացում

1) Կշռման բաժակիկի մեջ տեղադրում են 0.3-0.4 գ հետազոտվող միջոց: 0.0002 գ ճշգրտությամբ կշռված կշռուկը բաժակիկից տեղափոխում են 100 սմ³ տարողությամբ կոնաձև կոլբայի մեջ, որի մեջ նախապես լցվում է 25 սմ³ թորած ջուր և 20 սմ³ ծծմբական թթվի լուծույթ նոսրացված թորած ջրով 1:4 հարաբերությամբ (ըստ ծավալի):

2) Կոլբայի պարունակությունը խառնում են և տիտրում են կալիումի պերմանգանատի լուծույթով (0.1 ն) մինչև վարդագույն գունավորման առաջացումը, որը չի անհետանում մեկ րոպեի ընթացքում:

108. Արդյունքների մշակում

Ջրածնի պերօքսիդի զանգվածային բաժինը (C) տոկոսներով որոշում են հետևյալ բանաձևով.

$$X = \frac{0.0017 \cdot V \cdot 100}{m}$$

Որտեղ՝

V-ն հետազոտվող լուծույթի տիտրման վրա ծախսված կալիումի պերմանգանատի լուծույթի ծավալն է, մլ,

0.0017- ջրածնի պերօքսիդի զանգվածն է, 1 սմ³ 0.1 ն կալիումի պերմանգանատի լուծույթին համապատասխան

m- նմուշի զանգվածը, գ:

Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունները չպետք է գերազանցեն թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.5%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 6.0\%$ ՝ 0.95 հավանականության վստահելի միջակայքում: Հետազոտության արդյունքը կլորացվում է ստորակետից հետո մինչև առաջին տասնորդական նիշը:

Աղյուսակ 21

Պատրաստուկի աշխատանքային լուծույթների pH

Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ պատրաստուկի, %	pH
0.1	7.5±0.5
0.25	7.5±0.5
0.5	7.5±0.5
0.75	7.5±0.5
1.0	7.5±0.5
2.0	7.5±0.5

3.0	7.5 ± 0.5
-----	---------------